շեցուցիչ լուծին տակ ակամայից կ'խոնար-
հեն : Այս երջանիկ էի ես և քան զիս երջա-
նիկ թագաւոր մը չկար երկրիս վրայ , բայց
անատեն՝ երբոր իմ նախարարներ ինձ հա-
ւատարիմ, և իրենց դէմքը կատարեալ Ած-
պաշտութեան պայծառ լոյսը կ'զուարթացու-
նէր : Սակայն՝ գրեթէ Այն երանելի Գրիգո-
րին մահուանէնի վեր է , որ անոնք սկսան օր-
բատ օրէ մոլութեան և անիրաւութեան մա-
ռախուղները դիզել , և մօտէ , որ կարկտարեր
ամպ մը ձեւացուցած՝ մնացեալ ցաւալի նը-
շոյլն ալ նսեմացունեն : Զանազան ազդու-
խրատներով , և յանդիմանական խօսքերով
յանչափս զիրենք յանդիմանէցի , բայց նոցա
ականջ պատռած սափոր մըն էր : Վասնորոյ
այս իմ թագս ալ սկսաւ օր է օր տաղտկու-
թեան կոպիչներով բեռնաւորիլ , և այսօր ա-
հագին բլուր մը ձեւացած՝ զիսիւր տակ ձրզ-
մել կսպառնայ . այս թագը՝ որ նախանձու-
և ատելյութեան աչքեր ալ կ'ծրաբէ , զի
նոքա իմ խրատներէ ։ Ճանձրացած՝ սիրդ ձեռ-
ուըներով գաղանի յափշտակել կուզեն :
Բայց թէղ զիտնան ապերախտներ , որ Տրդատ
չսպասեր այն նզովեալ վայրկենին . ահա կա-
մաւ կ'հանեմ և համբուրելով գետին կ'ը-
զնելու :

ՕՖ. ՈՒ Է՞նչ կ'ընես Տէր Արքայ, կ'պաղատիմ
խնայէ :

ՏՐԴ. Լարձկեմ մեջքէս և այս սուրս ալ . այս
սուրը՝ որ հիւսիսային Ազգաց ախոյեան
Գեղուեցոն հսկայ զօրավարին պղնձապատ
զբահներէն անցնելով իւր Երկաթապինտ
կուրծքը պատռեց և անվնաս մնաց : Եւ
ահա սաստկութեամբ գետին զարկած կը
կոտրտեմ. կ'կոտրտեմ, զի չեմուզեր որ այս-
պիսի հաւատարիմու գոռող սուր մը քանի
անպէտնախարարներու հնազանդելով ժան-
կոտի, կամ ակամայից անոնց անգութ ձեռ-
քերէն յափշտակուի , և կամ իրենց թուխ
արեան մէջ թաթխուած պղծուի :

ԼԵՂԱՐ և այս երեելի Ազգաց նախանձելի
ականակուռ գահէս . որո՞ք թէպէտ բուռն
նախանձու կ'բորբոքին, բայց ուտիճմը ան-
դամ իւր ծոզ ձգել չեն համարձակիր . այլ
աւաղ՝ որ իւր Հարազատ ակունք ուտիճի
փոխուելով զինքը կ'մաշեն և խորտակելու-
մոտ են . կեղամ զի անմտութիւն է թա-
գաւորի մը այսպիսի գահումը վրայ բազմիլ :
Կ'հանեմ և այս մարդարտազարդ ծիրանիքը՝
զոր այնչափ մեծարանքներով զգեցած եմ.
և ահա պատռտելով կտոր կտոր կընեմ:
Գնա Սմբատ , փառաւոր զգեստներով
զարդարէ մեր պալատին դրան առջեւ կեցող
մուրացկանները, և մէկին լաթերը հոս բեր,

որ հագնելով հեռանամշուտով այս տաղտ-
կալի տեղես՝ որուն ալ դիմանալ չը կարեմ։
Այս . (լունակ) Ո՞հ , ի՞նչ ցաւալի վիճակ . փափ-
կութեան և հանգստութեան գիրկը մեծ-
ցած թագաւոր մը իւր ութսունամեայ հա-
սակին մէջ՝ Արքունի շքեղ զարդերը անար-
գած՝ միայնակեաց խիստ կեանք մը վարել
կուզէ : Ո՞վ Աստուած , դու՝ որ այսպիսի
բարի թագաւորին մը օրերով այնչափ սիրե-
ցիր զշայաստանը , որ իւր փրկութեան հա-
մար տասնու չորս տարի թիւնալից գագան-
ներով լեցուն վիրապի մը մէջ՝ ողջ պահեցիր
քոնուիրական Գրիգորը . դու՝ որ ՚ի սէր և ՚ի
հաշտութիւն շայաստանի եօթն լուսեղէն
Սիւներով Վաղարշապատ Քաղաքիս մէջ ձըշ-
գրտապէս յայտնեցար . կ'պաղատիմ , խոր-
տակէ այս զարհուրելի կամքը և մի դներ
քո շայաստան անսահման Ովկիանու մը ծոց :
Եթէ ոչ խրկէ քու հրեշտակդ , որ քաղէ իմ
հոգին . զի աւելի կ'ընտրեմ մահը՝ քան թէ
տեսնել իմ երջանիկ մայրը անյօյ այրի մը ,
և այսպիսի բարի և փառաւոր Տէր մըն ալ ան-
ձու կ քարանձաւի մը մէջ :

Տըպ . Վաղպիսի խօսքերով հետզետէ այս լը-
ռին , սիրելի ժամերուս վարագոյր մի պատ-
ռեր . փութա շուտով հրամանս կատարե-
լու :

Այսպար . Փութամ . և ինչպէս :

ՏՐԴԱԿ. Փութան և ուրախութեան սրտի փութա ,
զի իւր հրաժարելովս ոչ թէ չայաստան կը
գլորի՝ այլ խրատուելով յաւիտեան պիտի
ապրի :

ՍԻԲԱԿ . Եւ ինչպէս կրնայ ըլլալ այդ , Տէ՛լ
Արքայ . այն մօտիկայ ոխերիմ ազգերը՝ ո-
րոնք չայաստանի երջանիկ վիճակը տեսնե-
լով նախանձու տաք արիւնով կ'բորբոքին ,
բայց երբոր կ'յիշե՞ն բու ահաւոր անունդ՝
երկիւղի պաղ արիւն մը խաղալով իրենց ե-
րակները կ'թմրեցունեւ . այլքու հրաժարիլդ
լսելուն պէս՝ անողոքելի գաղանները իրենց
կատաղութեան ափշեցուցանելով՝ չայաս-
տան պիտի վագե՞ն : Չայաստանը՝ որ քեզ
պէս քաջ թագաւորի մը օրերով իւր որդւոց
արիւնները խմելէ ազատած՝ գոյն զգոյն ա-
նուշահոտ ծաղիկներով կը փթթի , ան ատեն
ոհ դարձեալ նոցա արեան մէջ պիտի ցամ-
քի : Չապա խնայէ՛ Տէ՛ր իւր , և ահա ոտքդ
ինկած կ'պաղատիմ , փարատէ այդ սոսկալի
խորհուրդը : —

ՏՐԴԱԿ . Ելիր , Արքան , որ իրաւունքդ իրա-
ւանց հնազանդի :

(ՍԻԲԱԿ Պատի իւլլայ)

ՏՐԴԱԿ . Յազմաժամանակեայ խաղաղութիւ-
ն հանգստութիւն մըն է , որ այն գոռող
և յիմար նախարարներու մոլութեան և ա-
նիրաւութեան պատճառ կըլլայ . և գրէթէ

հասարակութեան փոքր մասն ալ իրենց զըզ-
ուելի ախտէն ազատ չեն : Բայց քանի որ մե-
ծագոյն մասը յաւիտենականութե լուսաշա-
ւիդ ճանապարհ անտարբեր կընթանայ , այս
ախտը բոլորովին անհետացնել փութալու է .
եւ այս ուրիշ հնարքով մը չըլլար , բայց մի-
այն իմ հրաժարելով : Մօտակայ ազգեր
իմ հրաժարիլս լսելուն պէս Հայաստան պի-
տի վազեն , և ժողովուրդ անոնց հարուած-
ներէն նեղուած՝ զիրենք այնպիսի վահնգնե-
րէ ազատող թագաւորի մը պալատ պիտի դի-
մէ , բայց զիս գահուս վրայ չգտնելով՝ կո-
ծելով պիտի վնտուէ , և իմանալով որ զիս
կորսնցունելու պատճառ նախարարներ են ,
ան ատեն վրէժինդրութեան կայծակներով
վառած՝ անոնց վրայ պիտի յարձակի : Նա-
խարարները այսպիսի յանկարծական դէպքէ
մը սոսկացած՝ զիրենք ազատելու ուրիշ ճար
մը չի պիտի գտնեն , բայց միայն ՚ի բոլոր
սրտէ զղչացած՝ իմ բարանձաւս դիմել , և
մինչեւ ՚ի մահ ընթացքիս հաւատարիմ մնա-
լու դաշինք մը հաստատել : Ան ատեն՝ ես ալ
անյիշաշարութեամբ կ'ներեմ , և ժողովրդ-
եան սիրտը հանդարտեցնելու կ'փութամ .
ապա թշնամիքը հալածելով իմ մնացած օ-
րերս հանգստութեալը գահուս վրայ կա-
ւարտեմ : Բայց թէ այս այսպէս չըլլայ՝ Հա-
յաստան բոլորովին մոլութեան մէջ կ'թաթ-

խուի . և ան ատեն՝ իւր գլորումը շատ դիւրին կը լլայ :

ՍԵՐ . Եւ ինչո՞ւ հայրենեաց հարուածներ կրելւ ետքը կուզես որ խբառուին իրենը , Տէր Արքայ . քու անպարտելի զօրութեանդ վերայ մեծն Հոռվմ կը զարմանայ , և գոռոզն պարսկաստան ականջները կը խցէ . քու ահառոր անունդ չ'լսելու : Կանչել տուր զիրենք և կրկին լաւ մը յանդիմանելէ ետքը՝ փորձէ , և եթէ դարձեալ վարմունքիդ հակառակ գտնես՝ ան ատեն սայրասուր սուրիդ ճվարգելք իրենց անխիղճ սիրաերը ծակելէ . գիտցիք որ՝ Հայաստան մեծ սիրով այն արիւնը պիտի խմէ :

ՏԵՐ . 'Դադրէ իմս հաւատարիմ , և յարգէ քութագաւորդ , իս զիրենք խրատելէ ձանձրացած չեմ երբէք , բայց գիտեմ որ 'ի զուր և երբէք ալ այս իմ ընկճուած սուրը անոնց արենով զուարթացունել չեմ ուզեր . զի որչափ որ անոնք քրիստոնէական կրօնից խըստութենէն կ' զզուին , այլ Հայ անունէ երբէք . և մանաւանդ թէ կրօնքն ալ զիս կարգիլէ : Կուզես որ առանց զղման մեռնին և զիս յաւիտեան իրենց արեան պարտակակացուցանեն :

ՍԵՐ . Աքսորէ :

ՏԵՐ . Աքսորէմ , և ուր , եթէ հայաստանի սահմանի մէջ՝ չոն աւելի ազատ իրենց մոլու .

թեան կը հետեւին , և այն տեղի բնակիչ-
ները իրենց կը համաձայնեն . իսկ օտար սահ-
մանի մէջ ալ սբորել չեմուզեր : Ես Տըր-
դատն եմ , չեմ դիմանար որ Հայ մը օտարաց
լուծի տակ ձնշուի :

Միք . Ուրեմն ի՞նչ կրնայ այդ խորհուրդը խա-
փանել . դուն կուզես որ քու հրաժարելովդ
նախարարները խրատուին , բայց ես ամենեին
չեմյուսար : Անոնք բու հրաժարիլը լսելուն
պէս՝ պիտի ստիպեն զխոսրով թագաւորել ,
և թէպէտ հասարակութիւն որչափ որ իւր
բազմերախտ հայր կը շնչէ ուրիշ թագաւոր
չ'ընդունիր , բայց զանոնք ալ այսու պիտի
համոզեն « թագաւոր արդէն ծեր ըլլալով
իւր մնացած օրեր կատարելապէս Աստու-
ծոյ նուիրեց , և իւր որդին ձեզ թագաւոր
հաճեցաւ » և թշնամիք բաւական ժամանակ
խոսրովու ուժը չի պիտի փորձեն , կարծելով
որ ան ալ վեհ առիւծի մը արիւնը անարատ
կը կրէ : Վերջապէս ո՞հ դու տաղտուկ քա-
րայրի մը մէջ , և զչայաստան զեղիսութեան
վիճակի մէջ տեսնելով բիւր հառաջանօք
հոգիդ պիտի փչես :

ԷՌ . Քանի որ ես կենդանի օդ կը շնչեմ
չեմյուսար որ իմ որդին թագաւորէ . բայց
ի՞նչ կ'ըսեմ , մարդիկ բնականապէս փառասէր
են . թագի մը արտաքին պայծառութիւն
իրենց բանականութեան աչքը կը կուրցու-

նէ, որ չեն կրնար անոր պարունակած քստմնելի երկաթները դիտել։ Աակայն՝ հոգ չէ. Պարսկաստան սովոր է Հայոց նորանիստ թագաւորին ուժը փորձելու. և միթէ կը ընայ խոսրով ինծի չափ անոնց սիրտը վախ ձգել, և նախարարներ դարձեալ զիս չի պիտ փնտռեն :

ԱՅԲ. Կը փնտռեն՝ բայց թէ իրենց գոռողութիւն անյազլք պահելու համար՝ ադկէ զօրաւոր խորհուրդներ չյղանան :
ՏՐԴԱՓ. Գնաց դուն ամեննեին աներկմիտ :
ԱՅԲԱՓ. Ո՞՛չ . . . (Կը մենի)

ՏԵՍԱՐԱՆ Բ

Տրդատ առանձին :

ՏՐԴԱՓ. Գնաց Աիրելի հաւատարիմս զիս կը կին գահուս վրայ տեսնելու յուսով, բայց հոգին ինծի անանկ կը վկայէ, որ ես գահուս համար մեռայ արդէն. բայց ո՞վ կը տեսնեմ :

ՏԵՍԱՐԱՆ Գ

Խողորով և Տրդատ :

Խողորով. Կ՞՞նչ կը տեսնեմ.. հօրս թագը ընկառւած.. սուրը խորտակուած.. ուր է ինքը. բայց .. ահաւասիկ . . ո՞ հայր իմ, ո՞ Հայր իմ
(Հօր Գիւլ իւ վայէ) :

ՏՐԴԱՓ . Հանդարտե՛, Աիրելի որդեակ . բու
հայրդ ցնորած չէ բնաւ :

ԽՈԽՐՈՎ . Ուրեմն Բ' նէ է այս սոսկալի տեսայ
րան , ըսէ շուտով կը պաղատիմ . ո՞չ սիրտս . . .

ՏՐԴԱՓ . Այսպիսի տեսարաններու վրայ եր-
բէք մի սոսկար , զի Հայու մը նախատինք է :

ԽՈԽՐՈՎ . Ոսկումէս կը սառիմ . կը պաղատիմ ,
քակէ շուտով լոռւթեանդ կապը :

ՏՐԴԱՓ . Հանդարտե՛ ուրեմն :

ԽՈԽՐՈՎ . Ո՞՛ :

ՏՐԴԱՓ . Ես ալ ծերացեր եմ որդեակ . ժողո-
վրդեան հոգը ու ազմուկ արդելք կ'ըլլան
իմ մնացած օրերս կատարելապէս Աստուծոյ
նուիրելու . վասն որոյ իմ թագը ու դահը բեզ
յանձնելով՝ միայնակեաց ըլլալ կուզեմ :

ԽՈԽՐՈՎ . Ի՞նչ կը լսեմ , թագաւոր մը միայնա-
կեաց . զարմանք :

ՏՐԴԱՓ . Ո՞ի զարմանար . զի այն սիրտը՝ ուր
Աստուծոյ սէր անտարբեր կը թագաւորէ , հո-
գիէն միայն կը խոկայ : Յիշէ այն երանելի
կուսանք՝ որը ոչ միայն արբունի շքեղութի
առ ոտն կոխեցին , այլ իրենց արիւն անդամ
իւր սիրոյն համար թափել չը խնայեցին : Վասն
որոյ երկնից զարմանալի եղան , և երկրի
պատկառելի , և Աստուծած ալ իրենց ան-
զգայ ոսկորներուն անդամզուարթնոց սքան-
չելի ձիրբը չտալու չժուժեց . ո՞չ իրենց ա-
րիւնը դեռ այս ձեռուըներէս կը ծխայ :

Խոսրով. Աստուած կերպ կերպ կոչումներ ունի, և ըստ արժանաւորութեան իւրաքանչիւր անձին կը բաշխէ, և չուզեր, որ թագաւոր մը հասարակաց բարիք ոտքի տակ առնելով միայնակեաց ըլլայ:

ՏՐԴագ. Ի՞նո՞ւ, բայց իւրաքանչիւր անձը իւր կոչման մէջ փոփոխական է. քանի որ անոր արժանաւորութիւն ունի նոյն կը մնայ, իսկ երբ ոչ՝ առաջինէն բարձր, կամ ստորինի մը կը համնի:

Խոսրով. Թագաւորական պաշտօնէն աւելի ընտիր պաշտօն մը չկայ աշխարհիս վրայ, որ Աստուած զքեզ վարձատրել ուզելով անոր հասցունէ. և երբէք ալ անկէ ստորինին հասցունել չուզեր, զի դու իւր ամէն պարտականութիւնները անթերի կը կատարես: —

ՏՐԴագ. Ի՞նո՞ւ, ես մինչեւ ցայսօր իմ պարտականութիւններս անթերի կը կատարէի, իսկ այսուհետեւ ծերութեանս պատճառաւ, բայց դիտեմ որ ալ չի պիտի կրնամ. բայց թէ փառաց անյագութեամբ թագաւորեմ տժարդաբար՝ ինծի համար աններելի մեղք մըն է. և թող զայն ժողովուրդ իմ անհոգութենէն ձանձրացած՝ շուտ և անագան զիս անպատւորէն պիտի հրաժարէ. իսկ ես՝ որ բաւականութիւն ունիմ ապագան դատելու, ինչու կամաւ չը հրաժարիմ որ կամ Աստուծոյ կամքը կատարած կ'ըլլայ, և ապագայ բըռ-

նութենէն ալ աղատ : Ես կամակոր բանականի մը չեմ ուզեր նմանիլ :

Խոսրով . Եւ միթէ կը յանդգնի՞ ժողովուրդը ապերախտ անունը իւր ճակատը դրոշմել . ժողովուրդը՝ որ յիսուն տարի է 'ի վեր քու Հայրախնամ թեերուդ ներքե պատսպարուելով՝ աշխարհը իրեն ճշմարիտ երջանկութեան վայրմըն է դարձեր :

ՏԵՐ . Ինչպէս ծառ մը՝ որ բանի որ քաղցրահամ և առատ պտուղներ կուտայ , կը խնախուի և կը դարմանուի , բայց երբոր կ'սկսի արմատ փառիլ , և տերեներ ցամբիլ՝ ան ատեն ալ չի յիշուիր անոր առաջինն , այլ ներկան անօգուտ ըլլալով կը կտրուի չարաչար . սոյնպէս թագաւոր մը , կամու և իցէ հրամանատար մը՝ որ որչափ որ իւր հպատակները ըստ ամենայնի բարելաւութեան մէջ կը պահէ , իր ըստ Աստուծոյ պաշտօն կ'ընդունի անոնցմէ . բայց երբոր իւր առաջին կացութենէն փոքր ինչ կը շեղի՝ ան ատեն կամ անպատուօրէն իւր պաշտօնէն հրաժարելու կը բռնադատուի , կամ կեանքը զոհ կ'ըլլայ իւր փառամոլութեան : Հազուագիւտ է որդեակ , այն մարդը՝ որ եթախտագիտական մտօք իւր անձնական խիթը չզգայ :

ԽՈՍ . Եւ ինչ են այն հոգերը՝ որ զբեզ այդչափ կը նեղեն , ո հայր իմ : Որչափ որ դու կը

շնչես՝ բնութիւնը չայաստանի պարզ օդ մը
պիտի շնորհէ, և թշնամեաց խորշակներ, թէ
մերթ ծաւալին՝ Հայաստանի սահման հասած՝
բաղցը զեփիւռի պիտի փոխուին։ Առաւօտեն
հրեշտակը իւր լուսաթաղանթ թեերուն
բարձած երկնից ամենքնտիր ձիրքերու մեծ
մասը չայաստան պիտի թափէ, և փոխան
անուշահոտ խունկեր առած նուիրողին պիտի
մատուցանէ։ Արեգակը ծագած ատեն՝ նախ
Մասեաց գագաթ պիտի բարեւէ, և երեկոյին
իւր ճառագայթները չայաստանէն սգով և
ակամայից պիտի ժողվէ։ Իսկ ժողովրդեան
հոգը՝ ես սիրով նախարարներու հետ տա-
նելու յանձնառու կ'ըլլամ, և զիրենք իբրև
որդի կը խնամեմ։

ՏՐԵ . Լոռութեանս կապը քակելու ստիպեցիր
սիրելի խոսրով. գիտցիր, որ բու անփորձ
գլուխը և իմ սիրելի չայաստանը իմ ապա-
հով շուքէս զրկող նախարարներն են։

ԽՈՍՐՈՎ . Կախարարները։

ՏՐԵ . Այս գիտեր միթէ, որ իրենք զեղսու-
թեան և մոլութեան մէջ թաթխուած՝
կը հարստահարեն իմ սիրելի ժողովուրդը,
և կ'ատիպեն իրենց համաձայնել. և թէպէտ
ժողովուրդ առ այժմ ջերմ Աստուածակաշ-
տութեան լուսով կը փայլի, բայց մարդս
չարութեան դիւրայօժար է, մանաւանդ նոր
լուսաւորեալ մը։ Յայնչափս զիրենիք յանդի-

մանեցի, բայց առաւել զարմացայ յանդիւ
յանութիւն չարեաց խրախոյս գտնելով . վայ
ըեզ կուզեմ յանձնել իմ պաշտօնս, ինչու որ
անոնք ստիպուած են առաջին անգամ ըն-
թացըիդ հակառակ չվարուիլ ուխտելու .
և թէպէտ այն ուխտ երկարատե չէ, բայց
պիտի զգաստանան առաջին յանդիմանու-
թեամբդ . զի կը վախնան թէ մի գուցէ այս
ալ հրաժարելով գահը պարապ մնայ, և մեր
օձիքը բիւրաւոր ժողովրդեան և թշնամեաց
ձեռքը անցնի : Բայց աւազ, կորեալ լիեծն
չայաստան ան ատեն, երբ թէ դու իրենց
համաձայնիս, և դու մնացիր բիւրաւոր ժո-
ղովրդեան յաւիտենական կօրստեան պար-
տական, որոց ինձ չլսելու ակնկալութիւնն
ալ այս է : Քաջացիք ուրեմն, որդեակ, հօրդ
արիւնը անարատ կրելու :

Խոսքն. Ե՞ս թագաւորեմ . ի՞նչ ահռելի խոր-
հուրդ . ո՞հայրիմ, ահա նուիրական ծնկանցդ
առջեւ ինկած՝ կը պաղատիմ, ինայէ՛ որ-
դիդ, և մի զոհեր այդպիսի սոսկալի առա-
ջարկութեան մը :

ՏՐԴագ. Ուրեմն հիմայ դու Հայրենեաց պար-
տական մնացիր :

Խոսքն. Եւ ի՞նչ են այն քանի անպէտ նախա-
րարները՝ զորոնք քո կորովի բազուկներ կը
դողան խորտակելէ . եթէ դու կը ինայես
սուրդ՝ ահայաղթական դիւցազնի մը արժա-

Նի որդին պիտի երթայ, ու զանոնք պատառ
պատառ ընէ։ Թո՞ղ սատկին Հայրենեաց
թշնամիներ, ու ապրի Հայրենիք։

(Յառաջ կը կաչ։)

ՏՐԴԱՊ. Դադրէ, խոսրով, դադրէ. Երիտասար-
դական կայտառ արիւնը թշնամեաց ասպա-
րիզին մէջ միայն գովելի է, իսկ ուրիշ պա-
րագայից մէջ վնասակար և անարդելի։ Ճեր
հանդարտութիւն մը զգեցիր, որպէս զի
կրնաս կամելէդ յառաջ խորհիլ Ուր կ'եր-
թաս. այդ սուրը ես քեզ Հայ արեան մէջ
թաթիւելու չնուիրեցի։

ԽԱԿԱՆԱԿ. (Դառնագլ) Հայրենեաց թշնամիներ
Հայ կը կոչես։

ՏՐԴԱՊ. Հայրենեաց թշնամի չեն, այլ Աս-
տուծոյ։

ԽԱԿԱՆԱԿ. Եւս չար.

ՏՐԴԱՊ. Այս, բայց Աստուած կ'արգիլէ զմեզ
իւր թշնամեաց վրէժխնդիր ըլլալէ, և միայն
յանդիմանելու իշխանութիւն կուտայ։ Ասր-
գիլեմ, խոսրով կարգիլեմ զքեզ այդպիսի
անդթութենէ. գիտցիր, որ իւր հոգւոյն
աղտեղութիւնները քո սուր ժողուելով՝ ինքը
բնական պայծառ դէմքով առ Աստուած
կը սլանայ։ Բայց ահա կուգայ Ագաթան-
գէն։

Տրդաւու. Խոսրով, և Ագաթանգեղոս :

ԽՈՒՅՌԻՆ. (Ե Կ Պ Ե Լ) Ե Կ Պ Ե Ր ս ի ր Ե լ ի Ա գ ա թ ա ն գ ւ զ է , Ե կ պ ւ ր , տ ե ս Հ ա յ ո ց խ ա ղ ա ղ ո ւ թ ե ա ն Ա ր շ ա լ ո ւ ս ի ն ց ա ւ ա լ ի վ ի ճ ա կ ը . ո ր ա ռ ա ս ն ց մ ա հ ո ւ ա մ պ ը զ ի ն ք ը ծ ա ծ կ ե լ ո ւ մ թ ն ն ա լ ո ւ զ ե լ ո վ զ Հ ա յ ա ս տ ա ն յ ա ւ ի տ ե ա ն ա ր ե տ ե ս ն ե լ է պ ի տ ի զ ր կ է . Ե կ պ ւ ր ո ղ բ ա կ ի ց Ե ղ ի ր ի ն ձ գ թ ա շ ա ր ժ ա ր ց ո ւ ն ք ն ե ր թ ա փ ե լ ո վ . գ ո ւ ց է ա յ ս վ շ տ ա ց ե ա լ ս ի ր տ ի ւ ր ն ա խ կ ի ն կ ե ր պ ա ր ա ն ը կ ' ա ռ ն է : Ա Գ Ա Բ . Յ ա ն կ ա ր ծ ա կ ա ն ս ո ս կ ա լ ի գ է պ ք մ ը ա ր տ ա ս ո ւ ա ց ա ղ բ ի ւ ր ը կ ը ց ա մ ք ե ց ո ւ ն է , և լ ե զ ո ւ ս վ հ ա տ ո ւ թ ե ա ն շ ղ թ ա յ ն ե ր ո վ բ ե ռ ն ա ւ ո ւ ր ա ծ ա կ ա մ ա յ ի ց կ ը բ ա ր բ ա ռ ի : Գ թ ա շ ա ր ժ չ ո ւ ն ի մ ի ն է , Տ է ր պ ա յ ա զ ա տ , բ ա յ ց մ ի ն ա կ լ ո ի կ ի ւ ր յ ա ղ թ ա ն դ ա մ ո տ ի ց վ ր ա յ ա ր ձ ա ն ա ն ա լ :

(Տ ը պ ա պ ա յ ո պ ա յ է լ յ ն ա յ) :

Յ Է Ր Ա Պ . (Ո ծ Ա է ն բ ո ւ ն ե լ ո վ) ո ւ ժ ա ռ , Ա գ ա թ ա ն գ ւ զ է . ո ւ ժ ա ռ . զ ի ս ' ի գ ո ւ թ շ ա ր ժ ե լ մ ի զ ո ւ ր պ ն ա պ ի ք . Ե թ է Հ ա յ ա ս տ ա ն ծ ո վ ա ր տ ա ս ա ց դ ա ռ ն ա յ՝ զ ի ս ի ւ ր մ է ջ ը ն կ զ մ ե լ ա ն հ ը ն ա ր է . զ ի ո չ թ է ե ս կ ա մ ա ւ ի մ գ թ ո ւ թ ե ս դ ո ւ ռ ը կ ը փ ա կ ե մ , ա յ լ ե ր կ ն ա յ ի ն ա մ ե ն ա զ օ ր ձ ե ռ ք ը . ձ ե ռ ք ը՝ ո ր գ թ ո ւ թ ե ա ն ց գ ո ւ ռ ն ե ր կ ը բ ա ն ա յ :

Խ Ո Խ Ր Ի Ն . Ո ՞հ . յ ո ւ ս ա հ ա տ ո ւ թ ե ա ն ա հ ա գ ի ն վ ի հ

Ժը առջես կը բացուի , և զիս իւր յատակ խո-
րասուղել կ'սպառնայ . ուր երթամ , առ ով
դիմեմ : Ո չայր իմ , քանի որ զիս հոն չես
գահավիժեր , ահա կը հանեմ սուրս , և կը
խաւարեմ այն արել՝ զոր առանց քեզ ոլիտի
տեսնեմ :

(ՏՐԵՄԱԿ ԽԵՎԱԿ ԱՆ-ՌԸ ԽՈՍՔԻՆԴՈՒ ՅԵՎԱՏԵՆ ԽԵ-
ՎԱԴԱՎԱԼԵ :)

ՏՐԵՄԱԿ . Դու , որդիդ իմ , կեանքդ վերջացնւնել
կուզես . ուր է , յազթական Հօր մը գործ-
քեր դեռ քու ճակտին վրայ չեն փայլեր :
Մեռիր , բայց ինձ արժանի որդի ըլլալով մե-
ռիր , որ երկնից մէջ անհահ ըլլաս :

(ԽՈՍՔՆ ԽԵՎԱԿ ԼՅԱ :)

ՏՐԵՄԱԿ . Խուլաս . դեռ Արեգակն իւր ճառա-
գայթները չայց Անաստուածութեան , և
ստրկութեան վրայ չի սփռեր . զօրացիր հի-
մայ . . . բայց ահա կուգայ Ամբատ :

ՏԵՍՍԲԱՆ Ե

Տրդատ , Խոսրով , Ագաթանգեղոս , Ամբատ :

ՏՐԵՄԱԿ . Ե՞ր , իմս հաւատարիմ . բեր այդ եր-
շանիկ լաթեր , որ հագնելով շուտով հե-
ռանամ :

(ԽՈՍՔՆ ԽԵՎԱԿ ԱՄԲԱԿԱՅ ԱՆԵՆ ԽԵՎԱՆԵ :)

ԽՈՍՔՆ . Ո՞րի համար , Ամբատ , այդ գեղջուկ

ու պատռածած լաթեր . անիրամ , դուն ես
ուրեմն իմ հօրս թելադիր , դու ես շայաս-
տանի ճրագը մարելու պատճառ . տուր սուրս
հայր իմ , ահա ճանչցուեցաւ թշնամին :

ՏՐԵՅԻ . Ո՞ւր գացին իմ այնչափ խրատները
որոնց արդիւնք երբէք անձիդ վերայ չեմ
նշանաբեր . Զգաստացիր , որդեակ իմ , զգաս-
տացիր . խաղաղութիւն թողքեզ շունչ ըլ-
լայ , և խոչեմութիւն՝ սնունդ : Երկիրս հով
է և մարդիկ տունկ , մարդիկ խաղաղութեն
կաղնի են հաստարմատ Փոքրիկ հովէ մը մի
խռովիր , սրով մի պարծենար , այլ յԱստուած
և առանցքանից հարցաքննելոյ , և փորձեալ
ու ճշմարտախօս վկայից մէկը մի պատժեր .
գուցէ անմեղ ըլլալով դու յաւիտեան գա-
տապարտութեան տակ կը մնաս : Կարծեմ
հիմայ խօսքերուս արժանի պտուղը պիտի
քաղեմ . ինձ տուր ուրեմն լաթեր :

(Լավեր Սմբատէն իտունէ , և վայսի հագնիլ) :

Խոսրով . Ագաթանգղէ , վազէ կանչէ մայրս
ու խոսրովիդուխտ , գուցէ անոնք այս խրս-
տացեալ սրտին գթութեան առարկամը կըր-
նան ըլլալ : (Ո՞վ գիշեր աղետալի) :

ՏՐԵՅԻ . Դադրէ , Ագաթանգղէ , դադրէ , եթէ
ինձ հաւատարիմ ծառայ ըլլալ կուզես : Ի՞նչ
կը կարծես , միթէ անոնք խոսրովէն սիրելի
են ինձ :

(Ագաթանգղէ լը դաստիարակ) :

Խոսրով. Հագիր, հայր իմ. բայց դիմցիր, որ
յաւիտեան քեզմէ չեմ բաժնուիր:

ՏՐԴԱՓ. Եւ միթէ զիս աւելի՞ կը սիրես բան
զհայրենիք:

Խոսրով. Դու ես Հայրենեաց հաստակուռ
խարիսխ:

ՏՐԴԱՓ. Ե՛ հաւասիկ զքեզ ինձ փոխան կը թու
ղում, զի ես մօտ եմ խորտակելու:

Խոսրով. Իսպառ կը մերժեմ այդ խորհուրդը:

ՏՐԴԱՓ. Ուրեմն բանի օրէն ետքը՝ զիս գա-
հուս վերայ պիտի գտնես. զի ժողովուրդը
առանց թագաւորի մնալով՝ պիտի ստիպէ
զնախարարները՝ որք ակամայից զիս հրաւի-
րելու պիտի գան:

Խոսրով. Ծառղ մինչեւ ցայնօր իմ արտասուացս
կաթիլներ քու ծոցդ թափին, հայր իմ:
(ԱՅ Վաղէ և հայրը իւ գըիէ),

ՏՐԴԱՓ. (ԱԽՈՍՐՈՎ ՀԱՄԲՈՒՐԵԼՎՆՎ) Ոչ, որդեակ,
խնայէ սգալի մօրդ և խոսրովիդխտին, և
մի թողուր անմիտիթար:

Խոսրով. Ո՞չ ինչպէս բաժնուիմ այս քաղցր
գրկէն:

ՏՐԴԱՓ. Փոյթ չէ, որդեակ. գիտցիր որ թէ
չմեկնիմ, ապերախտ նախարարները իրենց
պիղծ ձեռուրներ բազմերախտ թագաւորի
մը արեամբ պիտի թխացունեն:

Խոսրով. Ո՞վ սոսկալի անգթութիւն. բայց, հայր
իմ կը պաղատիմ եկուր երթանք, որ խռո-

ված ազուբներդ քաղցր բունով խաղաղին .
իսկ Խոսրով անքուն սպասու ըլլայ այդուն
լուսածաւալ դէմքը բարեելու :

ՏՐԴԱԿ. Եւ Բնչպէս :

Խոսրով. Այս դիշեր մինչ ՚ի լոյս թող սգալի
որդւոյդ և ընտանեացդ քաղցր քուն աղի
արտասուաց փոխուի . վազէ , և քու վէրքե-
րըդ ամոքէ . ու այն ձեռքը՝ որ գթութեանդ
դուռը կը փակէ , բացման բանալիի մը փոխ-
ուի , և շարժի գթութիւնդ , ու արեգական
ոսկեգոյն ճառագայթներու պէս թափան-
ցելով այս սգապատ գահուդ ու թագիդ ըստ-
ուերը փարատէ : Եւ երբոր առաւօտ իւր
լուսաթաղանթ թերթերը բանայ , Խոսրով
այն արցունքներ տանի , ժողովրդեան և զին-
ուորներու գոգը թափէ , ՚ի գութ և ՚ի վրէ ժ-
խնդրութիւն գրդուէ զանոնք . զօրանան
Հայկին արժանի որդիք՝ վազեն ու բռնեն
կրօնատեաց և տիրագաւ վատերը . բռնեն
և բերելով բու դէմդ կայնեցունեն . և սու-
սերամերկ ստիպեն զիրենք , թէ ուխտեցէք
մինչեւ ՚ի մահ թագաւորին հաւատարիմ մնա-
լու , եթէ ոչ՝ իւր ծնկանց առջեւ զոհ պի-
տի ըլլաք : Եւ միթէ կրնան չուխտել . առա-
քինի մը անդամ մահէն կը սոսկայ , հապա-
մոլի մը որչափ առաւել :

ՏՐԴԱԿ. Այդ թէ ուզէի՝ և միթէ չէի կրնար
ընել , բայց բաջ գիտեմ , որ անանկով աւելի

պիտի հաստատեմ իրենց սրտին մէջ երերուն
տիրասպան խորհուրդը :

Խորոշ . Եւ ինչպէս :

ՏՐԵՄ . Ինչու որ, պիտի բոլորովին զզուին
ինձմէ, երբ տեսնեն, որ ես իրենց պատիւը
ու կեանք ժողովրդեան ձեռքի մէջ կ'արթըն-
ցունեմ, և թէպէտ առ ժամանակ մի առ ե-
րեսս, հնազանդութիւն պիտի ցուցնեն,
բայց գաղտնի իրենց գանձը ու ստացուածքը
հասարակութեան սիրտը որսալու համար
վատնել չի պիտի խնայեն. եւ այնուհետեւ
համարձակ իրենց անդութ սուրը հայրախը-
նամ թագաւորի մը արիւնով պիտի ժանդո-
տեն. անկէ ետքը՝ թէ և իմ արեանս վրէժ-
խնդիրներ ալ ըլլան, պիտի պատրաստուին
անոնց դէմ կռուելու : ԱՇ Հայաստան առ
ժամանակ մի թշնամեաց կատակ պիտի ըլ-
լայ, և ապա իւր պտուղներ անոնց տալու և
օտար ոտից կոխան ըլլալու չի պիտի տրտն-
ջայ : Բայզ թէ անոնք զիս մուրացկան վի-
ճակի, և անձուկ քարայրի մը մէջ գտնեն,
կը յուսամ որ գթութեան քաղցր անձրե
պիտի տեղի ունենայ իրենց աչքերէն գազա-
նային արիւնը վարատելու . և թէ ան ալ չէ,
քաջ գիտեմ, որ իրենց պատիւը ու կեանքը
ժողովրդեան ձեռքի մէջ տեսնելու վայրկե-
նին չի պիտի սպասեն, այլ ժողովուրդը չ'ար-
թընցած զիս հրաւիրելու պիտի գան : Բայց

այնպիսի զղջումն ալ Աստուծոյ հաճելի չէ ,
և ոչ ալ երկարատե . ուրեմն խոսրով , (կ'ը-
սեմ դարձեալ ,) դուն թագաւորէ , և մի խո-
ցոտիր բնաւ , որ հայրդ , թէ և անձուկ քա-
րայրի մը մէջ , այլ Աստուծոյ ձեռքը անոր
սիրելի հոգի մը պիտի աւանդէ :

Ամբառ . Պիտօցիր , Տէր Պայազատ , որ եթէ ըն-
դունիս՝ այս գահէն մահ պիտի սլանայ քու-
դալարի կեանքդ . չարաչար հնձելու՝ որչափ
որ իւր արժանաժառանգ տէր կը շնչէ :

Խոսրով . | աւ ճանչցիր զիս , ով Սմբատ . եւ
ապերախտ չեմ ամենեին : Բայց ահա կու-
դայ մայրս : —

ՏԵՍԱՐԱՆ 2

Տրդատ , Թագուհին , Խոսրով , Սմբատ և Ագաթանգեղոս :

Թագուհ . | ՞նչ կը տեսնեմ . . . Տէր իմ Արքայ ,
(Կը կայ ու Տը տիւն իւ գուէ :)

Տը տիւն . Ո՞ի սոսկար . սիրելի թագուհիդ իմ .
մի սոսկար : Հայաստան իմ Ճշմարիտ Յօ-
հաննէս ըլլալուս կը կարօտի , և Սեպուհ լեռ
ինձ Ճգնարան ըլլալու տիսուր տարակուսու-
թիւնը զարմանախառն ցնծութեան փոխեց :

Թագուհ . | ՞նչ . . ՞նչ կը լսեմ . . այս արցունք-
ներովս թող այս պալստ անուշաւհոտ ծաղիկ-
ներով փթթի և մինչեւ 'ի մահ իւր բուրումը

բեզ տալու համար՝ միայն թող զուարթ մնայ:
ՏՐԵՄԱԿ. Այդ քո արցունիքները անդադար
երկնից տուր, որ իբրև ցօղ չայրենեաց և
կրօնից սիրելի ծաղիկներուն վրայ սփռէ, և
իբրև շանթ՝ սննոնց փուշերուն. Եւ թող զիս
որ երթամ:

Թ. ադու. Եւ միթէ գաղրեցաւ բնութիւն ինձ
կենդանութիւն տալէ:

ՏՐԵՄԱԿ. Ո. ող, սիրելի թագուհիդ իմ. թող, որ
երթամ առանձնութե՛ն մէջ պարզ արցունիք-
ներով իմ քարացեալ վշտերս կակլեցունել:
Ես անարժան եմ այս պալատին և արժանի
մահկանացուաց յետինն ըլլալու:

Թ. ադու. Եւ ովզ քեզ այդ չափ կը վշտացու-
նէ, վեհազուն ամուսինդ իմ և Արքայ:

ՏՐԵՄԱԿ. Այս թագ ու գահը՝ որ այնչափ սի-
րելի էին ինձ, իսկ հիմայ անհաշտ և մահար-
կութշնամի դիտելով կը սոսկամ ու կ'ատեմ:
Խոսրով. Աւրիշ բան չէ զինքը վշտացնող, մայր
իմ, բայց միայն նախարարները, կատաղի
նախարարները:

Թ. ադու. Նախարարները. . ով Աստուած :

ԱԳԱԼԻԱՆ. Այս, անոնց գազանային կերպա-
րանքը իւր քաղցր տեսութեան անարժան
չը սեպէ:

Թ. ադու. Իմ չայրենեաց-Ալանաց, և չա-
յաստանի անբաւ զօրութիւնը բաւական
չէն իրենց փոշին օդին մէջ ցանելու:

ՏՐԵՄՊ. Այս բազուկներս միայն, բայց թէ որ
խիղճ մը, անագորոյն խիղճ մը զասոնք
չթմբեցունէ :

ԹԱԳՈՒՀԻՆ. Եւ ի՞նչ խիղճ :

ՏՐԵՄՊ. Կմ բնական, և մանաւանդ բրիստու-
նէ ական :

ԹԱԳՈՒՀԻՆ. Խիղճ մը՝ որ քանի ապերախտ
արեան կաթիլներով իւր հայրենեաց հիմը
նորոգել չ'ուզեր. այլ կը հեռանայ, որ ա-
րեան հեղեղատներ զայն խարխլով տա-
պալեն :

ՏՐԵՄՊ. Դեռ ողջ եմ ես. Խակ իմ մեռնելէս
վերջը՝ ահա իմ որդիս :

ԹԱԳՈՒՀԻՆ. Այս, ողջ եղիր դուն. և զայաս-
տան և իմ սոսկալի գլուխս քու ցանկալի
շուքէդ մի զրկեր :

ՏՐԵՄՊ. Ես կը հեռանամ, բայց իմ սիրոս
հոս է. բարեաւ մնաք :

(Ալ Թիկ :)

ԹԱԳՈՒՀԻՆ. Ո՞չ բռնեցէք զինքը . . . աւաղ . . .

(Ալ արագուր կը գոյնէ :)

ԱՐԱՐՈՒԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Չ ՊՐԵԺԵՎԼ ԱՐՏՈՒՆԻ ՊՐԼՍԴԻՆ ԱՇ. Ե-
ԳԱ-
Դ-ԻՆ Ա-Ը, Գ-Հ-Ը և Ե-Գ-Ը ԳԵ-ԱՐԱՆԻ Ա-Ը
ՏՐԱԾ Խ-Խ-Ն-ԱՆ :)

ՏԵՍԱՐԱՆ ՍԱ-ՍՁՒՆ

Ա-Գ-Ա-Ժ-Ա-Ն-Ք-Ե-Ղ-Ո-Ս Ա-Ռ-Ա-Ն-Ճ-Ի-Ն :

Ա-Գ-Ե-Ա-Ն-Գ. ՈՒՂ օր սկոյ, արեգակն դառնու-
թեան Հայոց բազդին վրայ սգալու կուգաս-
ըու ճառագայթներդ ժողվէ Հայաստանէն,
և թոշ գիշերային թանձր ստուեր մը իւր
մակերեսոյթ պատէ, զի գոռոզն Հայաստան
կուլայև իւր արտասուք մթութեան մէջ կու-
զէ. կուլան և իւր որդւոց շատերը և կատեն
զքեզ և ոմանք անարժան են քու պայծառ
դէմքդ տեսնելու : Ուր ես առիւծա-
րիդ Տրդատէս, ուր ես Հայրդ Հայրենեաց.
ինչու համար արտասուք կը թափէ քու սի-
գապանծ Մայրդ՝ որոյ աղբիւրին թումբ էր
քո կորովի բազուկներ. ինչու համար կորա-
ցուցիր իւր ճակատը՝ զոր գոռոզացուցիր

շքեղ յաղթանակներով : Դարձիր , զի ահա
այս ընկճուած թագ ու դաշն ալ կարծես թէ
մրմնջելով կաղաղակեն „ թէ ուր է Արժա-
նաժառանգ մեր Տէր . կաղաղակեն , և հետ
զհետէ իրենց փայլեր կը նուազին . բայց Վա-
հագն կուգայ :

ՏԵՍՏԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ագաթանգեղոս , և Վահագն :

Ագաթ . Ի՞նչո՞ւ , ով Ալահագն , այդպէս խռոված ,
գեղնած կուգաս . և միթէ դռն ալ ինծի
հետ ողբալու եկար . եկուր ուրեմն , ող-
բանք սգանք , և թող մեր ձայն մինչե . եր-
կինք արձագանգ տայ :

Վահագն . Ա՞ն , Տէր Ագաթանգղէ , իմ սիրելի
Պայազատ գիտես , թէ ի՞նչ դառն վիճակի
մէջ է : Այս գիշեր մինչ ՚ի լոյս բաղցր բու-
նի մը տեղի չ'տուին իւր աչքեր . երբեմն
սիրուն գլուխը ծունկիս վրայ դրած չեղե-
ղի պէս արցունքներ կը վազցունէր , երբեմն՝
խելագարի պէս—ուր է Հայրս , ըսելով ասդին
անդին կը վազէր , և երբեմն՝ յուսահատ դե-
րիի պէս Ճիտը ծռած՝ լոիկ կը կենար : Կար-
կեցաւ լեզուս , և ցամքեցան շըթունքներ
զինքը մխիթարելէ . դեռ պահմը չկայ , ու
քնոյ թմրեցուցիչ ծռւխը խաղաց իւր խռով-
եալ անդամներու մէջ . և այն ալ կը լսուի

երբեմն երբեմն , որ իւր սրտին խորերէն դառնապէս հառաջանքներ կ'արձակէ , ու ան ատեն՝ ոլոռի պէս արտասուք իւր գեղանի այտերով կը խաղան : Ես զքեզ կը փնտռէի . կը պաղատիմ , եկուր ինծի հետ , որ իւր արթընցած ատեն՝ անընդհատ մխիթարենք զինքը . (ով չարաղէտ դիպուած :

Ագաթան . Գնա՞ , Վահագն . Ես պէտք է հոս կենամ , ինչու որ այսօր խորհուրդի օր է , և Նախարարներ , անխիղջ նախարարներ հիմայ հոս կուգան , որ իրենց նախատալիր Ճակատները իմիններովս ալ բեռնաւորեն : Գնա՞ շուտով , մի գուցե արթնցած ըլլայ . և բաէ իրեն , որ իւր արցունքները քեզմէ ՚ի զաւուրիշ մէկի չյայտնէ . զի այս պարագայի մէջ մեզ պէտք է լալ , և իրեն բաջ կենալ . գնա՞ , ահա կուգայ վատն Սանատրուկ :

Ագաթան . Երթամ ուրեմն :

(Ալ Բեկն)

ՏԵՍՏՐԱԿ ԵՐՐՈՐԴ

Ագաթանգեղոս և Վանատրուկ :

Սանապ . Կ՞ոչէ կը տեսնեմ . արբունի գահը թափուր . . և թագն ու սուր ընկճուած . . ու կայ հոս . ուր է թագաւոր :

Ագաթան . Կ'ալութեանդ հարցուր :

Սանապ . Հոս ես , Ագաթանգղէ . իսկ ուր է թա-

գաւոր. և ի՞նչ են այդ արցունքները որ երեսիդ վրայ կը կենան :

Աժանան. Ես կուլամ այս ողորմելի գահ ու թագին վրայ ընտանի նախանձու աչքեր տեսնելով. կուլամ, որ արցունքներովս խաւարեմ։ Սանագ. Կը սոսկամ երկիւղես. կը պաղատիմ, շուտով լուծէ տարակուսութիւնս :

Աժանան. Կը սոսկամ. կայնեցուր սոսկումդ, զի դեռ ժամանակ կայ . . .

Սանագ. Այդպիսի խօսքերով տագնապս մի կրկնապատկեր. բսէ շուտով։

Աժանան. Աւետիս աւետիս խաւարասէր աչքերուդ. թռաւ Հայոց Արուսեակն։

Սանագ. Եւ ո՞ւր :

Աժանան. Հոն՝ ուր առաքիսութիւն քաղցրասիք զեփիւռ կը շնչէ :

Սանագ. Այդ խօսքերուդ, երկինքէն 'ի զատ՝ ամէն իմացականութիւն անզգայ է. պատռէ խօսքերուդ վարագոյրը :

Աժանան. Տարապայման յիմարութիւն չէ ապառաժներու վրայ ծաղկանց սերմերցանել։

Սանագը. 'Դեռ պիտի խաղայ սառնապատ երակներուս մէջ վագրային եռացեալ. արիւն մ'ալ դեռ մարդկային սահմանի մէջ զիս փակել ուշացնես պիտի Ագաթանգղէ :

Աժանիկ. Ո՞իթէ կարելի՞ է արևելք որոշուած սահման մը յարեմտից զքեզ իւր մէջ փակել. բայց ի՞նչ կսեմ, գուցէ իմ յայտնելովս

արագասլաց հրեշտակ Մը կըլլաս . . . Երբոր
գիշերային խաւար մարդկանց ագահութե
ջրագները սքօղած , բնութիւնն առհասա-
րակ լոիկ մնջիկ իւր գիրկը կը փայփայէր , ես
առանձին իմ սենեկիս մէջ ընթերցման կըզ-
բաղէի . յանկարծ դառնակսկիծ մորմոք մը
ականջներս թնտացուց , և խաղաղութիւնս
վրդովելով զիս իւր ծոց վազելու ստիպեց .
Ի՞նչ կը տեսնեմ , (ով Աստուած) բաջաղեղն
Սմբատ իւր երկնապարզ աչքերէն գթու-
թեան անձրեներով իւր ծոց կը լեցունե-
վհատած յուսով և թալկացած լեզով հար-
ցուցի պատճառը , և հեղձամղձուկ այս-
պէս պատասխանեց „ Թագաւոր Արքունի
փառք ձգած միայնակեաց ըլլալ կուզէ „ այս
ըսաւ և մրմնջելով դէպ ՚ի Պալատի գլխաւոր
դուռը բալեց : Խսկ ես լսելուս պէս՝ մասեաց
գագաթին սառնամանիք զիս յափշտակե-
ցին , և թալկացած գետին փոռուեցայ . քիչ
մը ետքը՝ իմ կայտառ ուժս ծեր կերպարան-
քով զիս փնտուելու դարձաւ , և մինչեւ հոս
հասուց դողդոջելով : (Ի՞նչ կը տեսնեմ . ով
սոսկալի տեսարան) Թագաւոր ծիրանին պա-
տամած , գլուխ բաց , և կուոյ ասպարիզի
ահարկու կերպարանքը զգեցած , լեզուին
սուսերով որդւոյն դէմ կը մաքառի : Խոս-
րով զիս տեսնելուն պէս՝ սկսան աղի արուաս-
ուաց ոլոռներ իւր աչքերէն վազել , և մայ-

բակորոյս գառի մը պէս իւր սիդապանծ պարանոց ծռած՝ այսպէս պաղատեց “Ագաթանց գղէ՛ Ագաթանգղղէ՛. գթա յիս ու արտասուե՛, բայց աւազ, որ անհնարին սուկումիմայն ընափր աղբիւրը կր ցամքեցունէր, և կարեկցութեան չունէի այլ ինչ, բայց միայն լոիկ թագաւորին նուիրական ծնկանց վրայ արձանանալ: Ուժ առ, Ագաթանգղղէ՛, ուժ առ, աղաղակեց Առիւծարին “իմհաւատարիմս, միթէ դու ալ զիս կ'ատես, այս կ'ատես, զի իմ իղձը այսպիսի փառքի մը մէջ դնել կ'ուզես՝ որ անողոքելի գազանի մը պէս ժանիքները կրծտած՝ ինձ մահ կ'սպառնայ, երբ այս լսեցի, սսակում զիս թողուց, և տարակուսութեան խոր վհի մը մէջ մոլորեցայ: Նոյն վայրկենին՝ Սմբատ ձեռքը գեղջուկ լաթեր մորմոքելով ներս մտաւ. Խոսրով զայն տեսնելուն պէս՝ վազեց կատաղաբար և օձիքէն բռնեց, և Սմբատ հօր թելաթիր կարծելով՝ իւր պողովատիկ սուրը անոր կուրծքը գամել կ'ուզէր. բայց թագաւոր զինքը ետ կացուց այնպիսի անիրաւ վրէժինդրութենէ. առաւ լաթերը ու սկսաւ հագնիլ: Այն ցաւալի տեսարանը խոսրովու գոռոզ գլուխը խոնարհեց, ցասումը գըթութեան փոխուեցաւ, և արիւն՝ արտասուաց. և բացաւ իւր բազուկները և ո՞հայր իմ, ըսելով՝ թագաւորին գիրկը սլացաւ: Այն

լայնալանջ կուրծքը արցունքներով թրջեց .
 բայց անհնարին վերըեր սաստիկ բարագած
 ըլլալով տեղի չ' տուին , որ իւր արտասուք ա-
 նոր սրտին խորերը թափանցէր : Այն միջո-
 ցին թագուհին ալ ներս մտաւ . և այն տարօ-
 րինակ տեսարանէն սոսկացած , արձան մը
 կտրեցաւ . և ապա վազեց մոլեգնաբար և
 զթագաւորը գրկելով խառնեց իւր արտասուք
 որդւոյն հետ : || Հ , որ անգութ սիրու չէ |
 խանդաղատեր . այնպիսի աղէկէզ տեսարա-
 մը , որ աչք չէր արտասուեր յաղթաբազու-
 կըն Տրդատ այն ողորմ վիճակի մէջ տեսնե-
 լով : Երկինք զարմանալով կը նայէր , և երկիլ
 գթալով , իսկ չայաստան , ո՞հ չայաստան ե-
 րեսի վրայ ինկած՝ գլուխը վեր վերցունել
 չէր իշխեր : Վերջապէս բայլ առաւ թագա-
 ւոր , և լժագուհին ազիողորմ ձայնով մը ա-
 ղաղակեց «բռնեցէք զինքը» ըսաւ , և շըն-
 չասպառ գետին փռուեցաւ . Այսատ թա-
 գաւորին ետեւէն վազեց . իսկ ես ու խոսրով
 զթագուհին չթողլով , և բոլոր դարձան՝ ի
 գործ գնելով հազիւ հազ յուշի բերինք :
 Ահաւասիկ սքանչելի դիւցազնի մը վերջ ,
 ահաւասիկ չայաստանի Առիւծին դառն վի-
 ճակը : || Վ երկինք , մինչ ցերը բարիլոնեան
 մարդկութեան նախատինք վիթխարւոյն գո-
 ռոզութիւն պատժող չայկին ընտիր արիւնը
 իւր սերնդոց ոմանց երակներու մէջ անա-

րատ չը խաղայ . բարձ բարձ այնպիսիք շա-
յաստանէն , որքաղցրահամխաղողներ կթես :
Սանապ . Եւ գիտե՞ս ուր գնալը , և պատճառը :
Ադամիան . Ոեպուհ ապառաժ լեռը իւր ծաղ-
կափիթիթ զբօսարանն է , և երանելի Գրիգո-
րին խոնաւ և անձուկ բարայրն՝ իւր փափ-
կութեան անկողին . իսկ պատճառը քեզ կը
հարցունեմ քեզ :

Սանապ . Ի՞նձ կ'հարցունես . և միթէ ես
հո՞ս էի :

Ադամիան . Եւաղ , որ բանականի մը հետ չէ խօս-
քըս . երկրի ո՞ր գոռող զօրութիւն կընար իւր
հուժկու աջէն այս սուրն ընկճել , բայց
միայն դու , և բոքանի պաշտօնակիցք . գուք
որ Հայ կը կոչուիք :

Սանապ . Այս , մեք հայ եմք , և այս ընտիր ա-
նունը մեր ուղեղին մէջ կը փակեմք :

Ադամիան . Այս կը փակեք , զի հպարտ անուն
մընէ . այլ իւր պարտականութիւնները ինչո՞ւ
չէք ճանչնար . Ճշմարիտ հայ կ'սուի՞ ան՝ որ
իւր ազգակիցները կը ձնշէ , ճշմարիտ հա-
յու գո՞րծ է հակառակել այնպիսի թագա-
ւորի . Ի՞ւ որ տղմի մէջ թաղուած անուն մը
արեգական կարգ դրաւ , որով դուք կը գո-
ռողանաք . դուք հայ՝ բայց լոկ անունով :

Սանապ . Ճանչցիք բու պատիւդ և դիմացի-
նիդ , և չափաւորէ խօսքերդ :

Ադամիան . Ես իմ պատիւս կը Ճ :

քիչ մը մեղմ պիտի խօսէի՝ եթէ դուն ալ
քուկդ ճանչնայիր :

Առնափ . Եւ ի՞նչ է իմ պատիւս որ արժանաւ-
որութեանս կը յաղթէ :

Ագութան . Քու պատիւդ քեզ կը հրահայէ
յարգել ժողովրդեան բարիք և առաքինու-
թիւն . և ոչ թէ պատիւդ միայն՝ այլ ինքն իսկ
մարդ կութիւնը . իսկ զուն՝ որ հակառակը կը
գործես՝ ոչ թէ միայն պատւոյդ արժանի
չես, այլ և մարդ կութեան իսկ :

Առնափ . Կատաղի առիւծ մը կը դառնամ, և
կատաղութեանս զքեզ զոհ ընել անարժան
կը սեպեմ. կորիր դիմացէս վատ :

Ագութան . Եյ՞ , ես կատաղութեան արժանի-
չեմ. զի կը ճանչնամ բանականութեանս
յարգ՝ որ է խոչեմութիւն և խաղաղութի,
կը ճանչնամ՝ և չեմ ուզեր իմ երջանկառիթ
և ընտիր ձիրբը վայրենի դազանային ահոե-
լի բնութեան հետ փոխարկել . բայց ահա
ի՝ ուգան Սանատրուկ, երկու կատաղիք ալ :

ՏԵՍԱԲԱՆ ԶՈՐՈՊԴԻ

Ագաթանգեղոս, Սանատրուկ, Շապուհ և Վուամ:

Ագութան . Եկէք ահաւասիկ դահ պարապ է .
Եկէք ապերախտք, բազմեցէք :

Հառիւ Վուամ . Ի՞նչ կը լսենք, ուր է թագաւոր:

Առնափ . Ե՞ր անիբաւութիւնները Պարթեն

Տրդատ՝ ԱԵպուհ լեռը առանձնանալու են
ստիպեր :

Հաղ. Առանձնութիւն. որչափ անպատճութի
թագաւորի մը համար :

Աժաման. Դադրէ, Հապուհ եքու բծովդ զու-
րիշը մարատաւորեր . թագաւոր իւր ա-
ռանձնանալով պատուաւոր է՝ քանի թէ թա-
գաւորելով :

Հապուհ. Եւ ինչպէ՞ս :

Աժաման. Վնմտութիւն է անիրաւութեան և
մոլութեան վրայ թագաւորել . ի՞նչ, հա-
մաձայնէր միթէ ձեր կամաց . թողուր որ իւր
սիրելի ժողովրդեան երջանկութիւն խան-
դարէք, զոր հաստատեց իւր հուժկու բազ-
կաց զօրութեամբ, կամ դիմանա՞ր, որ զա-
նոնք կրկին կռապաշտական պիղծ ախտին մէջ
թաթիւէք, որ զարհանապանչ հրաշքներով
սրբեցան . արդ պատասխանեցէք, կարելի՞
էր միթէ :

Առաջ. Ո՞եք այդ մասին մէջ անպարտ եմք .
բայց դիցուք թէ չեմք, այն՝ որ չկրցաւ ան-
ձանք մեր մոլութիւն սանձել, շքով կրնայի
միթէ :

Աժաման. Սանձելու մտօք չը հեռացաւ, այլ
չը տեսնելու . յառաջ տարեք վատե՞ր, յառաջ
ձեր չար կամք : Դուք՝ որ Յաստուծոյ չէք
վախնար, մահկանացու է մը որչափ առա-
ւել . . բայց ի՞նչ կսեմ. գահ պարագ է, յի-

շեցէք ժողովուրդը . . .

Առնապ. Ո՞եք զայդ կը յիշեմք, բայց ոչ սոս-
կալով. զի կը յուսամք, որ խոսրով պիտի
Պայազատէ ժողովրդեան խաղաղութիւնը
ըս վրդովելէն յառաջ :

Ադամ. Խոսրով կը պայազատէ.

Շապուհ. Այս, զի թագաւորական ամենա-
շքեղ փառքին ով չի ցանկար :

Ադամ. Ո՞վ ամօթ, ինչու իմ դէմքիս վրայ
կը շառագնիս. և միթէ կըսոսկան ասոնցմէ, այս
կը սոսկաս, զի մարդու ձակատը կարմրելու
միայն զօրութիւն ունիս :

Առաջ. Ո՞եզ ամչնալու ի՞նչ կայ :

Ադամ. Կ'ուրանաք այնպիսի թագաւոր մը՝
որ զշայաստան սբանչելի չէնքերով զարդա-
րեց, և նախանձելի յազթանակներով փա-
ռաւորեց. կ'արհաբարհէք այն ձեռքը՝ որ
յաւիտենական նախատինքէ մը ձեր անամօթ
ձակասները սրբեց : Ո՞վ ապերախտք, եթէ
չերնա՝ մինչեւ հիմայ Պարսկին անագորոյն շըզ
թան ձեր որդւոց արիւն անգամ ծծեր էր,
իսկ ձեր փոշին պիղծ ոտքերու տակ աներե-
սյթ եղած, և ձեր հոգիք երկնից մէջ շայ-
րենազոհ դիւցազանց ձանկերու մէջ ան-
դ թաբար կը ձնշուեին :

Առնապ. Ծննդ ձանչնար իւր պատիւր . ինչու
բիւրաւոր ժողովրդեան բարիքը ոտքի տակ
առնելով՝ հեռազաւ : Կ'ատեմք, յաւիտեան

կ'ատեմբ այնպիսի Թագաւոր մը՝ որ զշայ-
աստան կ'ատէ :

Ադամն. Դեռ աներասան լեզուդ չ'կարկես
պիտի Սանատրուկ . յիշեցէք, որ երբ ինքն
ձեր մոլութիւնը կը յանդիմանէր, դուք փո-
խան արտասուօք զայն ջնջելու , արիւն-
առւ գազանի արիւն ձեր աչաց մէջ՝ ձեր
մոլութեան ջերմպաշտպան կը նշանակէր . եւ
ով չէր կրնար ըմբռնել որ ձեր ապերախտ
ձեռուըներ պատրաստ էր բազմերախտ Հօր
մը կարմիր արեան մէջ թաթխուելու :

Շաղուհ. Եւ ով չի բարկանար , երբոր տա-
ռապարտուց յանդիմանուի :

Ադամն. Ճողովուրդ վկայ է ձեր մոլութեան,
և անիրաւութեան , և ձեր կերպարանք՝ իսկ . . .

Լուս. Ծանդ բու խօսքդ ըլլայ . բայց կրօնք
զինքը կ'պարտաւորէր կրկին կանչել զմեզ
ու յանդիմանել . ինչո՞ւ առանց իւր խոր.
հուրդը մեզ յայտնելու հեռացաւ :

Ադամն. Չես գիտեր Վռամ , որ փորձեալը
կրկին փորձել անմտութիւն է . հապա որ-
չափ հարիւրաւոր անդամ . . . : Բայց աս ալ
դիտցիք , որ Թագաւոր զձեզ այնչափ փորձե-
լովն անմիտ չիսեպուիր , այլիմըսածիս ներող ,
և ձեր ըսածին կատարող : Բայց ահա կուգայ
Տէր Պայազատ :

Խոսրով, Ագաթանգեղոս, Ամեատուկ, Շապուհ,
և Առամ :

Խոսրով. (Առանց Նախաբարելը Գենելու)
Սայրասուր սուրիդ սայրէն Հայոց բաղդնէ
գուրս ելեր.
Իւր ճակատն է ներկուած վեհ դիւցազանց
քաջ արեարք:
Հոգիք այն դիւցազանց իւր մազերէն են
բռներ,
կամին առնուլ սլանալ, բայց դեռ քո շուր
զայն ծածկեր:
Ռուր ես ո՞ Հայրիմ, դարձիր 'ի փրկել . . .
Ագաթան. Եկուր, Տէր Պայազատ. աչաւասիկ
այն հոգիք շօշափելի են:
Խոսրով. Ապերախտք, դուք հռա. Ես ձեզ հետ
ուրիշ կերպով կուզեի տեսնուիլ:
Առնապ. Ո՞եք հոս խորհուրդի եկանք, բայց
խորհուրդ զարմանիքի փոխուեցաւ, զի այս-
պիսի դիպուած մը անակնկալելի էր Տէր Պայազատ:
Խոսրով. Ինչու կը զար հանաք. և միթէ չէր
յիշեր ձեր ամբարշտութիւնը:
Շապուհ. Այն յիշեցինք, բայց դարձեալ
կ'զարմանանք. ինչու որ մեր շունչը իւր
ձեռքին մէջն էր. այնպիսի հզօր թագաւոր
մը ի՞նչ ուզերէն էր կրնար ընել. Ուրեմն մենք

անպարտ եմք . այլ իւր ծերութիւնն է՝ որ
զինքը բռնագատեր այսպիսի բարձր ու
բազմահոգ պաշտօնէ մը հեռանալու , և այ-
սուհետեւ անաշխատ կեանք մը վարելու :

Խոսրով . Բարկութենէս մազերս կը դիզանան
ինչ անտեղի խօսքեր : Միթե չէր կրնար
զիս իւր տեղապահ ընտրել , և ինքն իւր
մնացած օրեր գահուն վրայ հանդիստ աւար-
տել . կամ խոնաւ ու անձուկ այր մը թա-
գաւորական փափրւկ պաշտօնէն հեշտ է :

Առաջ . Այդ չգիտեմք . բայց երկնային առա-
քինութիւնը առանձինութեան մէջ միայն
մարդ մը կրնայ անարատ շնչել . եւ ինքը՝
որ այնչափ ածային սիրով կը վառուեր , այն
վիճակը իրեն հեշտ է երեցեր :

Խոսրով . Ուագաւոր մը կը պարտաւորի ժո-
ղովուրդ միայն առաքինութեան մէջ պահել
իսկ իւր անձնականը՝ զայն Աստուած այնչափ
չի փնտուեր : Այս ալ գիտցիք , այն սիրով՝ որ
տեղի ունի երկնային առաքինութեան , որեւ
իցէ ծանր պաշտօնի մէջ կրնայ անարատ
պահել :

Սանագ . Ուրեմն մեր անկարգութիւններ
զինքը բռնագատեցին :

Խոսրով . Այս :

Հաղուն . Ոչ ապաքէն ըստիք թէ , մեր շունչը
իւր ձեռքին մէջն էր :

Խոսրով . Ինքը ներող ընութիւն մը ուներ՝ ու

լոով ձեզ ազատ շունչ կը շնորհէր . իսկ հիմայ՝
զայն իմ ձեռքի մէջ դրաւ . և ես պիտի
արգելում :

Առաջ . Պայազատե՛ . բայց եթէ բեզ անհա-
մածայն ընթացք մը ունենանք , ան ատեն՝
ազատես . . .

Խոսրով . Պայազատ ե՞մ . բայց թողի առաջին
պտուղն ըլլայ այս սրով ձեր արիւն թափել,
որով ոզորմելի գահուս թուխքով կարմրե՞ս
և իւր փառած ոտքերը զօրացնեմ . աչա կ'ու-
գայ անգութք :

(Ը ժամանգեղաս խոսրովս Եկմականի , Երբ սու-
սալած նախարարաց վըսայ յարչանիլ ի՞ն-շէ :)

Ագաթան . Օ արկ զիս տէ՛ր , զարկ . քու վը-
բէժխնդրութիւնդ ինձմէ առ , և ազակա-
նեալ արեան մէջ սուրդ պղծել մ'արտորար .
յիշէ թագաւորին խրատները :

Խոսրով . Ո՞եկ դի կեցիր Խագաթանգղէ , ան-
մեղ ես դու . մէկդի կեցիր . իմ պապակած
սուրս միայն այս ապերախտներու թուխս ա-
րենէն պիտի զովանայ :

Ագաթ . Ո՞ի տէ՛ր մի , յիշէ (դարձեալ կ'ըսեմ)՝
հօրդ խրատները :

Խոսրով . Եիշէմ . ուրեմն ես թագաւորե՞մ .
թողում որ իմ ծերունի հայրը մութ այրի
մը մէջ հառաչէ . թողում , որ Հայաստանի ա-
զատութեան փրկիչ անոր ամէն բարիքներէն
զուրկ մաշի . կամ լողան մինչեւ ՚ի մահ սի-

բելի մայրս և խոսրիվիդուխտ արտասուաց
ծովու մէջ , և զինուորները՝ ո՞հ զինուորեներ
բարեխնամ Տիրոջմը կորստեան համար աղե-
կէ՞զ հեծեն : Գնա՞ գնա՞ , ձեմէ պալատին
չորս կողմ , և պիտի լսես անզգայ պարիսպ-
ներէ՞ն անգամ դառնակսկիծ ողբոց ու հա-
ռաչանաց ձայներ . որոց չ'դիմանալով ինձ
համաձայնելու պիտի դառնաս : Ո՞չ , որ ան-
գութ կը դիմանայ այնպիսի տխուր տեսարա-
նիմը . ուր փախան երգոց և ուրախութեան
հեշտալուր ձայներ :

Ադաման . Այդ քաջ դիտեմ Տէր . բայց դուն
ի՞նչ կը կարծես , և միթէ տառնց արիւնով
թագաւոր կրկին գահուն վրայ կ'պսակուի .
ոչ ապաքէ՞ն ան ատեն ևս հաստատ առանձ-
նական պարզ արցունիք մը պիտի ընտրէ , զոր
մինչեւ 'ի մահ անընդհատ թափելով սուրդ
այսպիսի արեան մը պղծութենէն ջնջելու :
Խոսքան . Ուրեմն ի՞նչ կրնայ Հայրս կրկին գա-
հը դարձունել :

Ադաման . Ասոնք միայն . թող երթան արտա-
սուօք իրենց չարիքները ջնջեն , և թագաւո-
րի վերբերն ալ կակղեցունելով առնեն զին-
քը ու դառնան :

Խոսքան . Ի՞նչ կ'լսեմ . ահաւասիկ իրենց գա-
զանային աչքը գթութեան բաղցը արտաս-
ուաց տեղի չտալու համար՝ զիս պայագատե-
լու կը հրաւիրեն :

Ա գ ա լ ա ն . Հ ա ս տ ա ն տ ե ս չ թ ա գ ա ւ ո ր ե լ ո ւ դ վ ր ա յ :
Խ ո ս ր ո վ . Հ ա ս տ ա տ , և յ ա ւ ի տ ե ա ն ' ա ն ք ա կ :

Ա գ ա լ ա ն . Ո ւ ր ե մ ն ա կ ա մ ա յ ի ց պ ի տ ի ա ր տ ա ս -
ո ւ ե ն , զ ի կ ը յ ի շ ե ն ժ ո ղ ո վ ու ր դ ը . . .

Խ ո ս ր ո վ . Պ ն ա ց է ք Հ ա պ ա ա ն գ ո ւ թ ը . ի ն չ ո ւ ե ք
կ ա յ ի ն ե ր , բ ա ր կ ո ւ թ ե ա ն ս զ ո հ ը լ լ ո ւ լ ո ւ :

Ս ա ն ա պ . Պ ա դ ր ե ց ն ւ ր ց ա ս ո ւ մ դ Տ է ր , զ ի վ ա ս
հ ո գ ւ ո յ և մ ա ր մ ն ո յ . փ ո ք ը ի ն չ խ ա գ ա ղ ո ւ թ ի
զ գ ե ց ի ր , ո ր զ ա յ ն ս ր ա փ ի դ մ է ջ ը ո լ ո ր ո վ ի ն Հ ա ս -
տ ա տ ե մ ը :

Խ ո ս ր ո վ . Խ ա ր ա յ է լ ի փ ր կ ի չ - Մ ո վ ս է ո ը ե ր կ ն ի ց մ է . ջ
ջ ա տ ա գ ո վ է ի մ բ ա ր կ ո ւ թ ե ա ն ս : Ե թ է ի -
ր ա ւ ա ն ց և Ճ շ ա ր տ ո ւ թ ե ա ն վ ր է ժ խ ն դ ի ր -
ն ե ր չ ' ը լ լ ա յ ի ն ' ե ր կ ի ր հ ի մ ա յ ո չ ա յ լ ի ն չ է ր ,
բ ա յ ց մ ի ա յ ն ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ն գ ա յ ո ո -
կ ե ր ո ւ տ ե ա ց բ ն ա կ ա ր ա ն :

Հ ա պ ո - հ . Ո ւ ե ք ճ շ մ ա ր տ ո ւ թ ե ա ն հ ա կ ա ո ւ ա կ ե լ
չ ե լ ք յ ա ն դ գ ն ի ր , ա յ լ ա ր դ ա ր ա ց ի և խ ա ղ ա -
զ ա ռ ի թ փ ա ս տ ե ր ո վ լ ք ո ւ ս ի ր տ դ գ ր ա ւ ե լ
կ ո ւ զ ե մ ը :

Խ ո ս ր ո վ . Օ ո ւ ր ց ե ց է ք ո ւ ր ե մ ն :

Ս ա ն ա պ ր ո - ի . Ո ւ ե ք զ ը ե զ Պ ա յ ա զ ա տ ե լ ո ւ հ ր ա -
ւ ի ր ե լ ո վ զ թ ա գ ա ւ ո ր ա ն տ ե ս ա ռ ն ե լ ո ւ մ տ օ ր
չ է , ա յ լ պ ի տ ի ե ր թ ա ն ի զ ի ն ք ը պ ա լ ա տ ի ն
փ ա փ ի ո ւ թ ե ա ն մ է ջ բ ե ր ե լ ո ւ , մ ի ա յ ն թ է ' դ ո ւ
Պ ա յ ա զ ա տ ե լ ո վ Հ ա յ ե ն ե ա ց հ ո գ ե ր ը ա ն տ ը ր -
տ ո ւ ն ջ տ ա ն ի ս . զ ի ի ն ք ն ծ ե ր ո ւ թ ե ա ն պ ա տ -
ձ ա ռ ա ւ ա յ ս ո ւ չ ե տ ե ա յ ս մ ե ծ պ ա շ ա ս ն ի ն

պարտականութիւնները ըստ հաջոյից հա-
սարակութեան տանել կարող չեն . և բաջ
գիտեմք , որ իւր հրաժարման հաւասարի ա-
ռիթն այ այս է :

Խոսքն. Այդպիսի խօսքերով երբէք չեմ խա-
ղաղեր . ովք ձեզ վկայեց թէ ինք ձեր է :
Թէ և ծեր , բայց Հայաստանի ընտիր ընտիր
երիտասարդ ընքիշ մը սուանց սկատիւէն
սոսկալու իւր հետ մենամարտել կարող է :
Սակայն միտքան . Այդ չդիտեմք :

Խոսքն. Ու թող զայն՝ ինք Հայրենեաց
Հոգեր տանելու երբէք չի ձանձրանար . տա-
նի պիտի և հասարակութեան փափաքը կա-
տարելապէս լեցնելու չափ տանի . բայց ա-
հա կուգայ Վահագն :

ՏԵՍԱԲԱՆ 2.

Առաջինք և վահագն :

Խոսքն. Ինչու Վահագն , այդպէս խռոված
կուգաս :

Վահագն. Տէր Պայազատ , Թագուհին և
Խոսրովիդուխոտ զքեղ կուզեն . օն երթանիք
իրենց արտասուբներ սրբելու . երթանը , ո-
զքեղ տեսնելով ծիծաղի փայլակ մը շողա-
այն թաղծալից գէլքերուն վրայ :

Խոսքն. Մերցիք անգութներ , բայց չե-

դուք իբրև իժի և քարբի խցեր էք ձեր ա-
կանջները՝ ճարտար թովչի ձայն չլսելու հա-
մար : Բնութիւն կը զարմանայ՝ թէ ինչպէս
կրցայ ծնանիլ . այսպիսի մարդկութեան նա-
խատինքներ : Դուք կենաց անարժան՝ բայց
ինչ օգուտ . . .

Վատահ. Գնա՞ դուն Տէր Պայազատ , և ըստ
իրենց որ անհոգ ըլլան . մենք անմիջապէս
զինքը բերելու կ'երթանք , եթէ քաջ դի-
տես որ իւր հրաժարելոյն պատճառ մենք
եմք :

Խառընկ. Այս դուք էք , բայց գիտցիք որ ե-
թէ չ'երթալու ըլլաք՝ ձեր չարաչար մահ
այս սուրիս բերանը կը տոչորէ . բայց ահա
կուդայ մայրս :

ՏԵՍԱԲԱՆ Է

Առաջինք և թագուհին :

Թագուհին. Ահա ճակատ՝ ուր ամենեին ա-
մօթ չի շառագներ , ահա աչք՝ որ արտա-
սուք չ'ամոքեր , ահա սիրտ՝ որ կը տարա-
կուսիմ , թէ ինչ սուր նետով կընամ ծա-
կել :

Սահագընկ. Այս , Վեհազուն թագուհիդ ,
շայու մը սիրտ միշտ պէտք է ասանկ ա-
մուր ըլլայ . . .

Թագուհին . Կոնլ ես , թէ վատատես

Սանտրուկ . Եւ ինչպէս :

Թագուհին . Տես զիս՝ որ հայ եմ , լսէ իմ
ձայնս՝ որ Ճշմարիտ հայու մը ձայն է , դիւ-
րազգեաց ըրէ սիրտդ , և հայութիւն իբ-
րև հազուագիւտ անդամանդ մը հոն փա-
կէ . Եւ եթէ իւր թշնամեաց ասպարիզին
մէջ մտնաս՝ թող սիրտդ անով երկաթապինտ
Վահան մ'ըլլայ . իսկ երբ իւր հակառակ գոր-
ծելու սխալիս՝ քու խիղճդ ծակուտէ : Հայ
րառը Պարսկի մը լեզուէ ալ կ'թռչի . . .

Շապուհ . Ա՞յս այդչափ զմեզ վասացուներ
քաջազունդ . հայութիւն մեր սիրտն է , մեր
լերդին արիւն է :

Թագուհին . Ահ . . ուր է իմ սիրելի առիւծարի
ամուսինս , ուր է ձեր հայրախնամ Տէր . ո՞ր
անգութ ձեռք զինքը իրբև մուրալու ամա-
մաչող կարօտեալ մը՝ նօթի , ծարաւ , և լա-
լական՝ խաւար և անձուկ քայրայրի մը մէջ
փակեց . ձեր ապերախտ և դաժան ձեռքեր .
ձեռք՝ որ մինչեւ հիմայ գոսացած կ'մնար սիր-
տերնուդ վրայ , եթէ իւր հուժկու բազուկ-
ներ բրցունելու չհասնէին : Ուրեմն գնացեք
այդպիսի հայութիւն մը բարբարոս երկրի մը
մէջ փնտուելու :

Առաջ . Ահ , տարապարտուց ամբաստանու-
թիւն . բայց ափսոս , որ չունիմք զօրաւոր
ձայմը զմեզ պրդարացընելու :

Թագուհին . Ո՞ր թանձր խաւար լուսոյ դէմ
կրնայ մաքառել , և ո՞ր անիրաւ դօրաւոր ձայն
Ճշմարտութեան դէմ : Թողէք , մէկդի թո-
ղէք վայրենի գոռոզ բնութիւնը , և մի սոս-
կաք մարդկութեան սահմանի մէջ փա-
կուելու : Ի՞նչու , ի՞նչ հարկաւորութիւն ու-
նէր թագաւոր զձեզ ամբաստանելու . թա-
գաւոր մը՝ որուն խղճին և գթութեան
վրայ երկինք կ' զարմանայ : Զեր ապե-
րախտ նետերուն խոցեր այնչափ սաստիկքա-
րացեր էին այն դիւրազզաց սրտին վրայ ,
որ իւր սիրոյ առարկաներ իրենց բոլոր
դիւթերով տկարացան ամոքելու . բայց
և այնպէս (ովզ զարմանալի խիղճ) զոր կը յա-
փշտակեն իւր թշնամեաց երջանկութիւն և
կենդանութիւն :

Սանագ . Եւր երջանկութիւն և կենդանու-
թիւն ալ մերն է . մի խռովիր թագուհիդ
ամենապատիւ :

Թագուհի . Եթէ անադորոյն խիղճ մըն ալ զիս
չտանջէր , և մանաւանդ թէ դիտնայի ձեր
արիւնը թագաւորին վէրբերուն դարման՝
այդ խօսքը ձեր ծխաշունչ սրտին մէջ պիտի
փնտռէի : Բայց այս ալ դիտցիք , որ թէ
ձեր կենդանութիւն ալչ կրնայ թագաւորը
իւր գահը դարձունել , չայաստան զձեզ
ծածկելու համար չունի մթութիւն մը՝ որ
իմ աչքիս արեգակն չըլւայ , ոչ Վահան մը

ուրիմնետերս սոսկան թափանցելու, և ոչ
Շերիմ ձեր պիղծ փոշին ամփոփելու. ահա
ես կերթամ :

Հապուհ . Պահա և ամենեին անկասկած եղիր .

(թագուհին իւ մենի :)

Խոսրով . Երթանք մենք ալ, ու պատրաս-
տուինք, ձեր հետքեր քննելով՝ դէպ ՚ի քա-
րայր ուղեորելու :

(Խոսրով . Աժամանգեղս և Վահագն իւ մենին :)

ՏԵՍԱՐԱԿ ՈՒԹԵՐՐՈՐԴ

Սահատը և Հապուհ և Վռամ .

Սահատ . Չէինք ստիպուեր զթագաւոր հը-
րաւիրել երթալու, եթէ խոսրով պայազա-
տելու հաջեր :

Հապուհ . Այս, քայց թէ ժողովուրդը զինքը
ընդունելու որ անկարելի էր, որչափ որ հայր
կը շնչէր . մենք անխորհուրդ խօսքեր ըրինք :

Սահատ . Եթէ իւր ձայն համաձայնէր մեզի
անտարակոյս պիտի համոզէինք զժողովուրդը:
Վասա . Դուք խորհեցէք, և ես սակաւիկ
յառաջ երթամդիտելու, մի գուցէ մէկը մեզ
մտիկ ընէ :

(Յառաջ ի՞երեայ :

Հապուհ , Եւ ինչպէս կրնայինք համոզել
զժողովուրդը :

Անապ . Թագաւոր քրիստոնեայ ըլլալէն յետոյ՝ շատ անգամ կ'ուզեր արբունի փառք ձգելով քարայրի մը մէջ առանձնանալ , բայց իւր օրինաւոր յաջորդ մը չ'ունենալուն , քաջ դիտեր , որ իւր հեռանալով հայրենեաց հոգը երեսի վրայ պիտի մնար , վայ կ'ստիպուէր զղջալ . իսկ հիմայ՝ տեսնելով որ իւր որդին չափահաս է , և ինքն ալ ծերութեան պատճառաւ ալ այսուհետեւ անկարող է իւր պաշտօնին պարտականութիւնները անթերի կատարել , իւր ուխտը կատարելու չ'սղձեց . և մենք ալ իրաւունք չ'ունեցանք իւր կամաց վրայ բռնանալու Եւ աշա այսպիսեօք անտարակոյս պիտի համազուէր ժողովուրդը . իսկ այնուհետեւ թէ Թագուհին , և թէ Թագաւորին մտերիմները չի պիտի յանդգնեին մեր գաւը իմացնելու , զի քաջ գիտեին , որ թագաւոր խոսրովու պայազատիլ լսելուն պէս՝ յաւիտեան պիտի զղուի պալատէն :

Հապուհ . Բայց կը զարմանամ , թէ ինչպէս խոսրով մերժեց արքունի փառաց ամենացանկալի շքեղութիւնը :

Անապ . Բնութեամբ թոյլ և մեղկ մէկը սովորաբար շատ գթոտ կըլլայ . սաստիկ գութը կ'առագաստէ իւր աչքէն թագին պայծառութիւնը :

Հապ . Բայց թողունք անցեալը , և ապագային վրայ խորհինք , որն որշատ հարկաւոր է .

Ապագային վրայ ի՞նչ ունինք խորհեշ-
լու . երթանք , և առ երեսս զղջալով զինքը
բերենք , և առ ժամանակ մի իւր կամաց
համաձայն վարուինք . ապա՝ այնպիսի ճար-
պիկութեամբ մը մեր ձեռք իւր արեան մէջ
թաթիսենք՝ որ դուքս քաշած ատեն՝ կարմիր
բիծ մը անգամ իւր վրայ չ'եշմարուի :

Հապուն . Ծայց թէ ինքը այդպիսի կասկած մը
չունենայ՝ որ եթէ ունի , անկարելի է , որ
դառնայ :

Ապագա . Թէ՞զ չ'դառնայ . երթանք առնել հաց ,
խորտիկ , զգեստ , և շիշ մըն ալ թիւնաւորած
դինի , և կրկին ու կրկին աղաչելէն ետքը
եթէ չ'դառնայ , ՚ի նշան մեր հաշտութեան
բաժակ մը գինի խմբունենք , ու դառնանք :

Հապուն . Վյս սպառնացող Ճիրաները անա-
տեն պատրաստ են զմեզ պատուելու :

Ապագա . Դուն անհոգ եղիր . ինքը ներող քնու-
թիւն մը ունի , որով պիտի արգելէ զթա-
դուչին և զիսոսրով մեզ վրէժիսնդիր ըլլալէ .
բայց թէ չ'համոզուին , և զօրք ու ժողո-
վուրդը մեր վրայ գրգռեն , այսպէս կ'պա-
տասխանեմք . զմեզ իւր հրաժարման պատ-
ճառ համարելով՝ մեք զղջալու դացինք , և
կրկին կրկին ոտքը իյնալով՝ վերադառնալու
աղաչեցինք , և չ'համոզուեցաւ . և որչափալ
ինքն կ'չնչէր՝ ուրիշ թագաւոր մը ունենալ
անկարելի էր , վասնորոյ մեք ալ հայթենիք

ոտնակոխ չըլլալու համար՝ ըրինք այս ան-
դթութիւնը : Այս կ'սեմք, զօրաց առատ
գանձ կ'բաշխեմք, ժողովրդեան հարկ թե-
թեցնել կ'խոստանամք և ասանկով զմեզ
արդարացունելով՝ կ'ազատիմք: Բայց այս ալ
գիտցիր, որ ժողովուրդը զմեզ կիզելու . չափ
հրով չի պիտի բորբոքի, զի թագաւոր ծեր
էր արդէն :

Հայու. { Յաղթող խորհուրդ . երթանք ուրեմն .
(Ալ մենին և վարդադոյր ի՞դոյուն ,)

ԱՐԵՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Տէսարան քարայրի մէջ

ՏՐԵՄ առանցին

ՏՐԵՄ . Ո՞ւր կամ ես . ուր կը շնչեմ . ի լնուիրական Հօրս Սրբազան այրին մէջ . այս խոսուզները իւր Ճգնազգեաց ծունկերէն են հայած՝ զոր ահա կ'համբուրեմ կարօտակէզ շըթթունքներով , և արտասուօքս կը թացեմ : Ո՞հ , որչափ անուշ կը բուրեն . կարծես թէ անմահութեան խնկոց բուրվառներ կը ծխան : Ո՞վ տեղի երջանկութեան . դու կենցաղոյս ծփանաց խաղաղութեան նաւահանգիստ , և քո ծոց միայն կրնայ մարդ մը շնչել այն ցանկալի առաքինութիւնը՝ զոր կը շնչեր նախամարդ փափկութեն դրախտին մէջ : Ո՞հ որչափ երջանիկ եմ , բայց չէ՝ ես երջանիկ չեմ բնաւ , զի իմ սիրելի ժողովուրդ (իմցանկալի որդիքս) իմ գթութեան և յուշիս մեծ մասը կը գրաւեն , և կարծեմ սրտիս մէջ մտած՝ աղիքներս կտոր կտոր կ'ընեն . ի՞նչպէս մոռնամ զիրենք . ո՞չ ապաքէն իրենց ազատութեան և առաքինութեան անձնանուերէի . ո՞չ ապաքէն բրտինքներովս հազիւ կարացի զիրենք այն վիճակի մէջ հաստատել . քաւքաւ . սիրելի որդիքս , ես զձեզ չեմ ուրանար :

բայց ի՞նչ կրնամ ընել. թէ դահս դառնամ,
աւելի պիտի տանջուիմ. զի պիտի տեսնեմ,
որ անխիղձ նախարարները զձեզ կը ճնշեն
ձեր երջանկութիւն կը խանգարեն, ու ձեր
երկնավառ ճակատները թխացնել կ'ուզեն։
Հապա՛ ի՞նչ ընեմ, ուր երթամ, ուր է իմ
հանգիստ. ո՞վ ապերախտ նախարարներ, որ
ձեր հայրագութ թագաւոր երկու Ճանա-
պարհի վերայ տարակուսեալ թողիք։ Ո՞հը-
րեշտակդ Գրիգորի, Եկանւը ժողուէ իմ արտ-
սունքներս, տար երկինք, թափէ իւր դո-
գը ըսելով իրեն թէ, այս այն մեծահոգի
թագաւորի արտսունքներն են՝ զորս կը
թափէ հիմա տարակուսած աչքերէ . ըսէ
իրեն թէ, այս քո անտանելի ճգամբք գնեալ
Տրդատայ արտսունքներն են՝ զորս կը բղևէ
վշտահար սրտէ . թող ընդունի և պարզելով
անուշահոտ խունկի պէս ամենակալ թագա-
ւորին նուիրէ . և փոխան իմ հանգիստս
առած՝ բեզյանձնէ և դուն ալ ինձի բեր։
Բայց գիտցիր, որ իմ հանգիստս ժողովրդոցս
մշտնջենաւոր առաքինութիւն ու երջանկու-
թիւնն է . թէ երկնից, և թէ երկրի ամե-
նացանկալի փառաց մէջ գլորելու ըլլամ։
Բայց ոտից ճայներ կը ըսեմ. ով կ'ուգայ
արդեօք :

ՏԵՍԱԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Տրոդատ, Սամեստուկ, Շապուհ և Վուամ:

Ես ի առ բնելը . Օ վեհ արքայն մեր Տրոդատ
վինտուելք սիրով խանդակաթ . ուր ես Ար-
քայ, ձայն տուր մեզ :

ՏՐԵՄԱ . Ո՞վ էք դուք՝ որ ի՞ն ձայնս լսել կ'ու-
զէք, թշնամի, թէ բարեկամ :

Սանագրունք . Խծնամի զգալի , և բարեկամ
իմանալի :

(ԵՐԵՒ ՋԵՒՆ ՏՐԵՄԱԿԱ ՀԸ ՏՕԳԻՒՆԱՆ)

ՏՐԵՄԱ . Եպեր սխտներ, դուք հոս . և ինչու
եկաք . իմ խաղաղութիւնս վրդովելու , և այս
Սրբազն այրը պղծելու . մի մօտիկնաբ ինձ,
հեռացեք շուտով այս տեղէն :

ԵՍԻՐԱՐ . Ո՞չ, այս ի՞նչ ցաւալի և դառն վե-
ճակ Տէր Արքայ :

(Թագառ-ուրին ոպալ իշյան)

ՏՐԵՄԱ . Ելեք անգութք, ելեք . ձեր փափուկ
և սիրելի մայր-մոլութիւն-զձեզ կ'կանչէ .
որչափ խորթէ ձեզ այս տեղ , այս տեղը՝ ուր
խիստ առաքինութիւն յը կը թագաւորէ :

(ԵՍԻՐԱՐ ոպակ իւլուն)

Սանագ . Ո՞ի զայրանար Տէր Արքայ, և զթու-
թեանդ զմեզ անարժան մի համարեք . ուր
գնացինքո սբանչելի դութ , և հիսնալի ներ-

բողամտութիւն :

ՏԵՐ. Իմ ներողամտութիւնս , զայն դուք
սպառեցիք , և զիս մահկանացուաց յետին
ըրիք : Հեռացէք շուտով այս տեղէս , և թու-
ղէք զիս հանդարտ , որ պարզ արցունքնեւ-
րով այս այրը լեցունեմ . որպէս զի երկինքը
զձեզ դժութեան արժանի համարելով ինձ
նոր ներողամտութիւն շնորհէ :

Ըստուհ . Աթէ տա՞ր երկինք , որ կարենայիք
մեր սիրտերը կարդալ , զայն պիտի գտնէիք
քու սրտիդ հաւասար . ուր միայն՝ անարատ
առաքինութիւն կ'թագաւորէ :

ՏԵՐ. Առաքինութիւն . այն կ'տեսնեմ , որ
ձեր արտաքին կերպարանաց վրայ ակալայից
կ'թափառի . իսկ մոլութիւնը՝ կարաւ ձեր
հոգւոյն ճակատը դրոշմած կ'դիտեմ :

Առաջ . Ո՞ի այդչափ զմեզ վատ կարծեր Տէր
Արքայ . և միթէ մեք բանականութեան
ոահմանը թողի՞նք բոլորովին . և միթէ մոլի
մը առաքինի չի կրնար ըլլալ . ոչ ապաքէն
շատեր մեզ ապացոյց՝ որոնց չարութիւնը
տարիներով իբրև շոգի Ովկիանու բարձրա-
ցած՝ երկինքն է ամպածածկեր , իսկ մի
օրեայ առաքինութիւն որպէս քաղցրաշունչ
զեփիւռ շնչելով այն ամպն է փարատեր :

ՏԵՐ. Այն , այդ կըլլայ . բայց երբոր՝ այն
զեփիւռը կամաւորական սրտէ մը շնչէ . իսկ
երբ ակամայ՝ կրակ կտրած այն ապերէն ցո-

լալով՝ հոգւով և մարմնով զի՞նքը անխնայ կը կիզէ : Գիտե՞ք, Սաւուղ կիսեան մեղայ ըսեւլով՝ արդարացաւ, այլ ևս առաւել երկինքը՝ ի վրեժիսնդրութիւն գրգռեց . ինչու որ կամաւ ըսսաւ, այլ ուրիշներէ բանանադատեցաւ : Այսպէս ալ դուք՝ որ չէ թէ կամաւ ձեր անօրէնութեան վրայ զղջալով՝ ինձմէներողութիւն խնդրելու եկերէք, այլ առ ահին թշնամեաց և ժողովրդեան է . կամաւ կըլլար՝ քանի որ ես գահուս վրայ էի :

Սանտառ . Ուրեմն յաւիտեան մոլութեան մէջ կ'որսուինք :

ՏՐԵԴԱԿ . Բաւ լիցի . ձեր ամբարշտութիւնները քաւելու հարար՝ գնացէք ամեն մէկ քարայի մը մէջ առանձիացէք :

Շապուհ . Իսկ ով խնամէ ժողովուրդը :

ՏՐԵԴԱԿ . Այդչափ կ'ցաւիք զժողովուրդը . այս կըցաւիք, զի ով պիտի ըլլայ այսուհետեւ զիւրենք կեղեքող . ով պիտի ըլլայ իւմ օիրելի որդւոցս երջանկութիւն խանդարող, և զիւրենք կրկին կռապաշտական պիղծ ախտին մէջ թաթխող . արդարեւ մեծ ցաւ : Անմիտք, չէք գիտեր որ դուք հեռանալուն պէս՝ Տրդատ նոր երիտասարդ մը եղած՝ կրկին գահուն վրայ կ'պսակուի, իւրքըտամբ փրրկեալները Հայրական գթով խնամելու :

ԱԼԱՅ . Թող Աստուած մեզ չներէ . իսկ դուներէ, և գահգ պատսպարելու դարձիր, և

թող զմեզ չայտառանի մէջ մեր ընտանեաց
բով . Բայց գիտցիր , որ բիւրաւոր ժողովրդ -
եան առջև պիտի ուխտեմք մեր արիւնը ,
եթէ այսուհետեւ փոքր ինչ շաւիդէդ խստո -
րած տեսնես . . .

ՏՐԵՄԱ. Չեր արիւնը . եթէ այդպիսի ան -
գթութիւն մը ընել ուզեկի՝ մինչեւ ցայսօր
ձեր փոշին անգամ երկրէս աներեւոյթ եղած -
էր . և ովկի՝ յանդգնէր ձեր արեան գին ինձ -
մէ պահանջել , Աստուծմէ ՚ի զատ :

ԱՅՆԱ. Ահա կրկին յաղթանդամ ոտքերուդ
կ'պլուիմ . բաց գթութեանդ դուռ Տէր Ար -
քայ , բաց և զմեզ անտես մի առներ . եթէ
մեզ չես խնայեր՝ մեզ չես գթար՝ խնայէ չա -
յաստանի՝ որ արեան ծով մը պիտի դառնայ :
Ակայ է մեզ անաչառ երկինք՝ որ կատարեալ
սրտէ եմք զղջացեր . և եթէ չես հաւատար՝
դարձիր , որ փորձով ապահով ըլլաս .

ՏՐԵՄԱ. Ես զձեզ փորձելու պարտականու -
թեան սահման անցուցի , և առ հայրենիք
ունեցած պարտաւորութիւնս ալ նոյնպէս
կատարեցի . այլ այսուհետեւ թող իմ որդիս
վայազատէ , և դուք իր կամաց համաձայն
վարուեցէք . դուք՝ որ կ'պնդէք թէ կատար -
եալ սրտէ եմք զղջացեր : Եւ եթէ ինքն ալ
առաքինութեան ասպարիզին մէջ կ'գթի ,
յանդիմանեցէք զինքը . յանդիմանեցէք
որդեակը իմ , և մի համաձայնիք : Առաքինու -

թիւն զ յարդը , թէ երկնից և թէ երկրի մէջ
յաւիտեան իբրե հազուագիւտ անդամանդ
ժը կ'փայլեցունէ . խսկ մոլութիւնը՝ երկիր
իբրե տիղմ և երկինք իբրե մահապարտ կը
դնէ . գիտեմ որդեակք , թէ և մարդուս կամք
չարին է հակամիտ , բայց տուաւ Աստուած
դատողութիւն դատաւոր կամաց . որպէս զի
կրնայ կամելէն առաջ խորհիլ . և եթէ խորհի ,
որ տկար իմացականութիւն չի կրնար որու-
շել , որ չարը թէ հոգւոյ և թէ մարմնու
վնասակար է . և ան ատեն՝ թէ հոգւոյն հա-
մար աւչէ՝ գէթ մարմնոյն օգտին համար
պիտի զզուի չարէն : Եւ այս աւ յատկապէ-
կ'պատուիրեմ ձեզի , որ իմ սիրելի ժողո-
վուրդը հայրական գթով խնամեք , և իրենց
հոգերը անտրտունջ տարէք . որբոց խնամա-
կալ եղիք և այրեաց ձեռնկալու . յիշելով որ
անոնք ամենազօր Հայր մը ունին երկնից մէջ ,
ուստի անշուշտ ձեր վարձը պիտի ընդու-
նիք . բայց եթէ ընդ հակառակն՝ պատիժ . . .
Ո՞հ , որչափ հեշտութեամբ պիտի փչէի հո-
գիս , եթէ կենացս մէջ խօսքերուս արժանի
պտուղները քաղէին Հապա գնացէք , որդե-
ակը իմ , Աստուած ձեզ օգնական :

Շապուհ . Վէ . առանց զբեզ տանելու , յա-
ւիտեան աստի չե իք բաժնուիր . զի որչափ որ՝
դու կ'չնչես՝ խսորով արբունի թագէն իբրե-
հաչէ կ'զզուի . և մանաւանդ թէ ժողովուր .

Դըն սւլ զինք չ'նդունիր : Եւ ինչպէս կրնայ
չ'զզուիլ . որ անգութ որդին արբայական
փափկութիւնը կ'վայելէ , և իւր հայրը տաղ-
տուկ այրի մը մէջ կ'թողու . և որ ժողո-
վուրդը կ' խլէ այն ծառը՝ ուստի յարքաղց-
րահամպտուղներ կ'բաղէ , և անոր անփորձ
բողբոջը տեղը կ'տնկէ . այն , կ'տնկէ , բայց
թէ մահուն խորշակ զայն թառամցունէ :

ՏՐԾՈՎ . Դուք անկասկած եղիք . ես կ'խտւ-
րեմ իմ հաւատարիմ Սմբատը՝ որ համոզէ
զանոնք . և կ'պատուիրեմ (որ եթէ չկրնայ) ժո-
ղովրդոց մեծամեծներէն և զխոսրով հոս-
կանչէ , զորոնք անտարակոյս ես պիտի հա-
մոզեմ :

Ա-Ա-Տ . Ո՛չ . երբէք զքեզ այդ դառն վիճա-
կի մէջ չեմք թողուր . դարձիր պալտո , ան-
տե՞ն ազատ է այդ կամք :

ՏՐԾՈՎ . Ենծի համար ամենեին մի ցաւիք . և
թէպէտ՝ արքունի փափկութեան մէջ սովո-
րած մէկին ամենածր է այսպիսի կեանքմը ,
բայց ես ան Թագաւորներէն չեմ . իմ ա-
նունս ոչ միայն տրդատ է , այլ յովհաննես ալ
է . տրդատը փառքով և զօրութեամբ մէկ-
դի ձգեցի , և յովհաննես իւր առանձնու-
թեամբ և ձգնութեամբ զգեցայ . և թէպէտ՝
առջի բերան ոչ կամաւ , այլ հիմայ՝ ամենայն
յօժարութեամբ . և այսաւ գիտցիք , որ որ-
չափ բնութիւնիմ կենացս կիշիւէ , թշնամեաց

յարձակում մղելու համար՝ Տըդ առ անունէն
չի պիտի զգուիմ. և այն՝ եթէ հարկ ըլլայ :
Սանապ. Ալ հիմա հասկցանք, որ դիւրազգայ
սիրտգ ապառժ մընէ կտրեր. բեր ուրեմն ով
Առւրեն, այդ փաթանքները, ու գինին :

ՏԵՍՎՐԱՆ ԵՐՐՈՅԴ

Առաջինք և Առարեն :

Տըդապ. Եւ ի՞նչ են առոնք :
Սանապ. Հաց, խորտիկ, և զգեստ. բայց նախ
հանեմ այս զգեստները. պատռէ տէր արքայ,
այդ գեղջուկ լաթերն, որ հագնիս :
(Քայլի ծրաբները բանալ :)

Տըդապ. Ո՞ի բանար ՚ի զուր Սանատրուկ,
մի բանար. այս տեղը՝ ուր խիստ առաքինու-
թիւն մը կը բնակէ, իւր ճշմարիտ պաշտօն
եայն ալ այսպիսի լաթերով կ'ընդունի :

Շապուհ. Ո՞ի մերժեր կը պաղատիմք տէր
արքայ. եթէ ոչ՝ թող զմեղ մինչև ՚ի մահ
քեզի հետ կենակցելու. զի թէ զբեղ այդ
վիճակի մէջ թողլով մեկնինք, մեր հանգըս-
տութիւն հոս կը մնայ :

Տըդապ. Չեր սէրը թող զիս այս վիճակի
մէջ թողու :

Վահաճ. Կակքոյդ զմեղ սիրելու նշան թող ըլլայ :

ընդունել մեր չնշեն ընծան եթէ ոչ՝ զքեղ
անհաջո թշնամի պիտի ճանչնանք :

ՏՐԴԱՊ. Իմ զգեղ սիրելու նշան թող ըլլայ,
ասոնք հոս ձգել ու մեկնիլ :

ՍԱՆԿՈՒԹ. Եկցունեմ ուրեմն՝ բաժակ մը գինի
և խմի ըսելով հաշտեալ եմ ձեղ հետաշ-
ւիսեան . ապա թէ ոչ ամենեին չեմք
հաւանիր :

ՏՐԴԱՊ. Եկցուր :

(ՍԱՆԿՈՒԹՐՈՒՎ ԲԱԺԱԿ ՏԸ ԼԵՅՆԵԼԸ ՏՐԴ-
ԱՊ կ'ու-ԳԱՅ)

ՏՐԴԱՊ. Հաշտեալ եմ ձեղ հետ, և ձեր ա.
պառնի բարեգործութիւնը թող Աստուծոյ
հաշտութեան ալ միջնորդ ըլլայ (Գիւին կը կ'ու-
('Սակարանելը մէկի մէկի ՏՐԴԱՊԱՅ յեռ-ը
համբուրելը - իերեան)

ԾԱԿՈՒՆ. Բայց ուր է Սմբատ, Տէր Արքայ. զոր
պիտի խրկես ժողովուրոը և զխոսրով համո-
զելու :

ՏՐԴԱՊ. ԱՇ, իմ սիրելի հաւատարիմս. ինքը չի
դիմանար զիս այսողոր վիճակի մէջ տեսնելով
այլ այս լեռան վրայ թափառական՝ իւր արտ-
սունքներով ապառաժները կը թրջէ, Բայց
գնացեք դուք, և ես կերթամ զինքը գտնելով
կը խրկեմ :

ԱԼ-ԱՅ. Ոչ թէ մարդ, այլ ապառաժներ ան-

դաշ կուլան քեզ պէս բարի թագաւոր ըլ
այդ եղկելի կացութեան մէջ տեսնելով : Ա՞հ
երանի թէ ընկերանայիր մեզ :

ՏԵՐԱՊ. Փոյթ չէ , որդեակիք իմ . գնացէք :
Ն. Դարձարս . (Գլուխնին ծուելով) բարեաւ մնա
մեր Հայրագութ Տէր :

ՏԵՐԱՊ. Բարեաւ երթան իմ որդիք , և բա-
րութեան մէջ հաստատին :

(‘Ն. Դարձարներ իբին խոնահելով իւ մէինին)

ՏԵՍԱՐԱԿ ՉՈՐՐԱՐԴ

Տրդատ առանձին :

ՏԵՐԱՊ. Գնացին անգութք , իմ երկինք սլա-
ցած հանգիստ հողմերուն բերան գնելով .
բայց ինչո՞ւ տարակուսիմ , ինչո՞ւ շելովկար-
դամիրենց սրտին խորերը : Ահա կ'տեսնեմ ,
որ մոլութիւնը , զզուելի մոլութիւն և ան-
խիզա անիրաւութիւն հոն անգնդային իշ-
խանին աթոռը կը ձգեն . իրենք անտարբեր
կը բազմին , և տիրասպանութիւն մընալ ա-
նոնցմէ հաստատ պիտի թագաւոր էր , եթէ
ընկերանայի իրենց : Բայց ի՞նչ գալար է զոր
կզգամսրտիս մէջ . աղիքներս կը կտրտին . .
արիւնս կը սառի . . ուժս կը հատնի . . ով
Աստուած , ի՞նչ է այս . . մի գուցէ անգութք
զիս թիւնաւորեցին . անտարակոյս , զի այսպի-
սի սաստիկ գալար ը կենացս մէջ երբէք չէի

զգացեր . . և իմ զարմանալի ուժս ալ այս-
պէս յանկարծակի զիս թողնել, անկարելի :
թագաւորէ ուրեմն տիրատպանութիւն, թա-
գաւորէ միւսներէն հաստատ : Բայց ոտնա-
ձայն կը լսեմ . կարծեմ իմ հաւատարիմօէ . .
կոտրտեմ ուրեմն այս անգութ շիշը . . որ անոր
կենացն ալ վնաս մը չհասցունէ (Ավան Յեռ-
կառնէ) ով բաժակ մահու , կը թափել
զբեզ . կը թափեմ բայց թող բո դառն դո-
լորշին մինչեւ երկինք չը բարձրանայ . բաւա-
կանացիր Տրդատայ պէս թագաւորի մը
կեանքը բաղելով :

ՏԵՍԱՐԱԿ ՀԻՆԴԵՐԻՈՐԴ

Տրդատ . և Ամբատ :

Ամբատ . Ի՞նչո՞ւ այդպէս թմրած , դեղնած գե-
տին կը թաւալիս . վեհազուն Տէր իմ, ուրէ
քո անպարտելի զօրութիւն :

Տրդատ . Իմ զօրութիւնս , իմ ուժս . . գողցաւ
այս անգութ բաժակ :

Ամբատ . Ի՞նչ կը տեսնեմ . ի՞նչ է այս բաժակ .
ըսէ շուտով . սոսկումէս կը սառիմ :

Տրդատ . Ես խմեցի գինի այս բաժակով . . և
բաժակը զիս թիւնաւորեց :

Ամբատ . Ուիւնաւորեց . ով բերաւքեզ այդ .
ուստի բեզ այդ . հապա ըսէ . աւաղ . . .

Ուգատ . Անգթութեան չափը լցաւ . . երկինք

Հիացաւ . . երկիր սոսկաց . . և չայաստան
թմրեցաւ . . զի Առիծն չայոց մահը ընդունեց
այն ձեռքերէն , այն ձեռքերէն՝ որոնցմէ
կեանք կը յուսար :

Սմբատ . Իմ հաւատակմութեանս անարժան
է այդ լոռութիւն . քակէ շուտով իւր կապը ,
Արտ . Եւ միթէ դուն չտեսա՞ր նախարարները :
Սմբատ . Նախարարները . ահ , ուր են , ուր փա-
խան . (Աստին անտին իւլուց :)

Արտապ . Ա՞սէ սողացուցին իրենց ձեռքերէն . .
և իւր հոտը չուզեցին զգալ . . և մեկնելու
աճապարեցին .

Սմբատ . Դեռ հիմայ մեկնեցան . վազեմ , կամ
ես ալ քաղցը մահ մը առած քեզմէ յառաջ
երկնից մէջ դալստեանդ անհամբեր կը լլամ ,
կամ իրենց դժոխահեռ արեան մէջ անագորոյն
ձեռք մը թաթխած՝ յառաջ իմ վէրքերը կը
սրբեմ . ապա քերելով՝ քու վէրքերուդ վրայ
կ'սրսրկեմ , որ առողջ և զուարթ հոգիդ ոլա-
նայ . հապա , վազեմ (յառաջ իւլուց :)

(Տըրտուութեան իլյուստրացիոն իշխանութեան իւլուց :)

Տըրտուութ . Դադրէ իմս հաւատարիմ . . եթէ հա-
ւատարիմ անունը Ճակտէդ ջնջելչեսուզեր . .
ահ , անողորմ , դուն ալ զիս կատես . . և մի-
թէ Տըրդատ այնչափ վատ եղաւ . . ո՞հ , Տըրդատ
այնչափ անարդ եղաւ . . որ իւր մարմինը ան-

փոփով մը, ա՞լ չունենայ. . . աւազվբաղդին. . .
Ա ՏԲ առ. Գիտցիր Տէր Արքայ. քանի որ իմ մը -
թագնեալ, կամ բու թշնամեաց գազանային
աչուըները չեն գոցուեր, չունի Արքատ ա-
պերախաւ ձեռք մը Հայաստանի լուսատու
ձբագը մարելու :

ՏՐԴ առ. Գիտցիր և դու ով Ամբատ, որ իմ շը-
ուարած հոգիս Երկինք հասնելուն պէս՝ . . .
այդ պիսի անդ թութեան մը վրէ ժխնդրու-
թիւն պիտի խնդրէ :

Ա ՏԲ առ. ԱՇ, հերիք չէ, որ բաղցր գթու-
թիւն մը տարտարոս ձիւազներու ձանկերու
մէջ պղծուի. հերիք չէ, որ ազնիւ մարդա-
րիտ մը խոզերուն առջև ձգուի : Ո՞վ Արքայ,
ինչպէս այդ պիսի երկնահաճոյ և փարելի ձիրը
մը անոնց վրայ կ'շարժես. անոնք՝ որ Երկնից
ատելութիւն են և իւր հաճոյըներէն իրու-
հրէշէ կ'զզուին. անոնք՝ որ քու անդին կե-
նաց անիւը կը կոտրատեն. անոնք՝ որ քու
հզօր բազկացդ զարմանալի աշխատութեամբ
ուռաճացած բազմաբեզուն այգիին խաղող-
ները կը կթեն, իսկ զքեզ քու վերջին օրե-
րուդ մէջ պտուղէ մը անդամ զիրկ կը ձգեն.
անոնք՝ որ քու ձակտիդ քրտինքներով իրենց
ձակատը գոռոզացուցին, իսկ զքեզ աւազ,
կորագլուխ թշուառի մը պէս ապառաժներու
վրայ անշուք մահուամբ կը վերջացունեն :
Էտք եմ՝ գթութիւն գթութեան վրայ շար-

ժելով սրբեցաւ . ու խաղաղեցաւ . երթամ
ուրեմն :

ՏՐԴԱԿ . Դադրէ սիրելի Սմբատ . . և լու . քու
ողորմելի թագաւորիդ . . զադրէ , և զիս ան-
հանգիստ Մ'ըներ :

ՄՅԲԱԿ . Ահա դադրեցայ . բայց . . .

ՏՐԴԱԿ . Ի՞նչ աւելի կ'ընէ ան՝ որ իւր սիրո-
ղին սէր կը փոխարինէ . . Հապա պէտք է-
թշնամիները սիրել . . և այս մեր Փրկիչ
կ'ըսէ . . .

ՄՅԲԱԿ . Ոիրէ դուն , իսկ ես ազատ եմ . . .

ՏՐԴԱԿ . Աղամ . մեղացուր խօսքերդ , զի սուր
են . սուր մը՝ որ երկինք կը խոցուտէ :

ՄՅԲԱԿ . Ոճող խոցուտի երկինք . թմրած եր-
կինք թող արթնեայ , արթննայ վրէժխնդիր
ըլլալու հայրենատեաց վատերուն . երկին-
քը՝ որ կ'արգիլէ զմեզ վրէժխնդիր ըլլալու-
Եւ ահա կ'առնեմ այս բաժակն ալ , և սաստ-
կութեամբ զարնելով կը փշրեմ որ իւր Ճայնի
ալ իմինիս հետ մինչեւ երկինք ըարձրանայ :

(Բաժակի յետութեանէ):

Վրթնցիր ով երկինք , արթնցիր . եթէ քու ա-
նունդ Ճշարիս վրէժխնդիր է , ահա ինչ-
պէս այս բաժակը քարերուն զարնելով կը
կոտրտեմ , անանկ ալ փշրէ այսպիսի բարի
թագաւորաց թշնամիք :

(Բաժակի ասբերուն իւլուննէ):

ՏՐԴԱՊ. Փոխան երկինք ՚ի վրէժինդրութիւն
գրգռելու . . իւր աչքը նոր երկայնմտու-
թեան բուն մը կը դնես . . օրհնէ թշնամի-
ները, որ արթննայ:

ԱՅԲԱՊ. Օրհնեմ. Եթէ լեզուս օրհնէ, սիրտս
կ'անիծէ: Եւ ահա կը լսե՞մ որ մրմնջելով
ձայն մ'ալ այս ապառաժները կարձակեն
աթէ սատկին սատկին բարի թագաւորաց
թշնամիք :

ՏՐԴԱՊ. Հերիք եղաւ Սմբատ . . որ վիշտե-
րուս վրայ վիշտեր յաւելուս . . անդութ, այդ-
պէս զիս կը սիրես . . այդպէս զիս կը մխի-
թարես . . հանդարտէ իմս հաւատարիմ, ու
եկուր, որ սդալի գլուխս փոքր ինչ ծուն-
կիդ վրայ դնեմ. . զի ուժս կը հատնի և չեմ
կրնար այս խիստ ապառաժներուն վրայ պառ-
կիլ:

ԱՅԲԱՊ « Ահաւասիկքեզ ծունկերս, կուտամ
և հոգիս ալ. բայց ուր է Տէրիմ. ահ շը-
մնաց արդեօք ան դառն բաժակէն՝ որ Հա-
յաստանի կենսատու Առիւծին կեանքը կը
քաղէ. ուրեմն ես ինչու ապրիմ, ինչու շնչեմ,
ես՝ որ անարիւն ճպուռ մը դարձայ. իմ եր-
ջանիկ մայրը անյոյս այրի մը տեսնելու, մահ-
կանացուաց յետին ըլլալու, արտասուաց
ծովու մէջ ծփալու. քաւ քաւ, թող չ'ապ-
րիմքնաւ: Հապա Տէրիմ, եթէ կայ վարձա-
տրէ: Հաւատարիմդ այնպիսի քաղցր մահ մը

տալով. ապա թողիւր ծունկեր քեզ տայ, իւր ձեռուըները քու լայնալիր լանջօբդ փաթթէ, իւր արցունքներով քո գորովալիր գիրկիդ կը թրջէ, և իւր հոգին ալ քուկինդ հետ քաղուած՝ գրկէ զինքը ու այնպէս ոլանայ. իսկ երկնից մէջ՝ զքեզ Գրիգորին գոգը թողլով ինք ամենազօրին առջեւ բրմնջէ. վըրէժխնդրութիւն վրէժխնդրութիւն, մինչե իւր.քինահան ձեռքն արթննայ, և հոգւոյս ալ քինաբեկ ճակատ սրբուի :

ՏՐԴԱՓ. Եկուր . . որ հանգստանալով քեզ զուրցեմ :

ԱՅԲԱՓ. Եհան կու գամ. դիր գլուխդ . սիրեմ այն գլուխը:

(ԱՅԲԱՓ իշնապի, և ՏՐԴԱՓ Գլւ-իւ Գոգը կը տնէ):

ՏՐԴԱՓ. Եհան մարդկահնար մահու մը անգութ ատրոպէն. . իմ կեանքս բնաւ քաղելու մօտ է . . իմ մեռնելէս վերջ խնամ տար ցանկալի Հայաստանի, . . . և Խոսրովու, իմ փոխան իրեն հայր ըլլալով . . և ըսէ. . .

ԱՅԲԱՓ. Դադրէ սակաւիկ տէր իմ. ոտից ձայնէր կը լսեմ. և ահա ողբասաց ձայն մըն ալ :

Գուրուն յայն կը լսուի :

Ով տաղտկութեան այր անձուի, էր քեզ այդ սուգ, արտասուք. նանենի հատք թող կարմիր

Թափեն դէմքէդ տխրալիր :

Արեգական սուրբ շողեր
թող փարատեն քո ստուեր,
բուսնին ծաղկունք խնկաւէտ
ապառաժուտ քո կողեր .

զի Դրախտ Հայոց և հանգիստ
դու միայն ես գրաւեր :

Այլ լայ թող լայ Հայաստան
և անձրեւեն իմ աչքեր ,
որ իւր պտղից քաղցրահամ
զրկուելով ելք ցամքեր :

Հայր իմ Հայր իմ, ձայն անուշ
առւր ինձ . որդիդ եմ սնյուշ :

Սբառ . || Հ Խոսրովու ձայն էր . . . ուրեմն
լոիկ քուն ձեւանամ . . մի դուցէ մէկէն ՚ի
մէկ զիս այս մահուան վիճուկի մէջ տեսնեւ-
լով . . չափազանց այլայլի . . և իւր կետնըը
իմինիս հետ փոխանակէ :

Ոմքառ . || Հ . եկաւ ահա :

ՏԵՍԱՐԱՆ Զ

Սմբատ, Խոսրով, Ագաթանգեղոս և Վահագն :

Ոմքառ . Եկուր Տէր Պայտագատ . եկուր կամա-
ցուկ մը . ինըը . . ահ ինըը . . սաստիկ տադ-
նապելէն ետքը . . գլուխը գոգս դրաւ փոքը
ինչ նինջ առնելու . բայց ոհ, կիսարթուն և
անհանգիստ նինջ :

(Խոսրով Տբառայ իւ Տօդինայ , և Երեւանէը
իւ Հ-մքո-ըէ)

բրտառ . () Հ , այս ի՞նչ սիրոյ քաղցր համբոյր -
ներ է . . որ իմ երեսս կ' տաքցունեւ . . գու ես
անձկալի որդեակ . . դու ես . . համբուրէ ու -
րեմն՝ համբուրէ . . վշտալից հայր մը :

(ՏԵՐԱՊ ԿԸՆԿՐԻ ՍՅԲԱՊԱՅ ԿՊ-ԱՆԵԼՎ) :

Խոսքով . ինչու այդպէս թմրած թալկացած
կը տեսնեմ զքեզ ո Հայր իմ . ինչու շնչա -
կուր կը խօսիս , և ինչու կու լաս :

ՏԵՐԱՊ . Լու լամ ծայրալիք ուրախութենէս . .
որ ոխերիմ քաղդը . . կենացս մէջ զիս ար -
ժանի ըրաւ կրկին . . ցանկալի որդւոյ մը
հեշտալիք գգուանաց :

Խոսքով . Ա Հ , դուն իմ սիրած գէշ կը կար -
դաս հայր իմ . կարծէի՞ր որ անգութ որդի մը
զքեզ մոռնար , կարծէի՞ր , որ առանցքո սի -
րափայլ երեսը տեսնելու արեգական ճա -
ռագայթները սիրէր : Քանի որ այս սգալի
գլուխս Հօր մը , անձկալի Հօր մը շուքէն է
զրկուեր , զրկուեր նաև զուարթնոց դովելի
ձիրքէն : Իմ աչացս լոյսը քուկինիդ մէջ կը
շողայ , և երեսիս վարդ մը քու դէմքէդ կը
ծաղկի . գարնան գալարի մը ատոք հունձի
մը հետ խառն , մանգաղ մը անագորոյն ան -
տարբեր պիտի քաղէ . արծուի մը սրաթուիչ
իւր ձագ նորափետուր թեերուն քարձած՝
այնպէս պիտի սլանայ . Արեգակ մը ճաճան -
չագեղ , և արութեակ մը լուսափթիթ երկ -

Նից կամար մեկտեղ պիտի ծագին :
ՏՐԵՊ. Խոլէ երկի՞նք, դալարի կեանք մը՝ որ
կենացս հունձին հետ պիտի քաղուի . . ու
զուարթ և պայծառ տնկէ Հայաստան . . թէ
չորնայ Հայաստան՝ թող ինքն ալ չորնայ . .
իսկ թէ ոչ՝ իւր ձմեռը չհասած մի քաղեր :
Խոսրով. Թէ հնձուիս դուն, հունձ է Հայ-
աստան . . .

ՏՐԵՊ. Ինչու որդեակ իմ, ինչու . ես ցամբած
Հայաստան ծաղկեցուցի . . իսկ դուն զը-
ւարթ պահել ալ չես կրնար :

Խոսրով. Ի՞այց թողունք հայր իմ, այսպիսի
խօսքերը, և իմանամ պատճառը, թէ ինչու
կը տոչորիս և շնչակտուր կը խօսիս :

ՏՐԵՊ. Որովհետեւ անսովոր էի այսպիսի
խոնաւ տեղեր բնակելու . . վասն որոյ սաս-
տիկ գալար մը պատճառեց սրտիս . . բայց
հոգ չէ, զի քիչ ատենէն կ'անցնի . . .

Խոսրով. Ի՞նչ. Միթէ կարծես, որ այս տաղ-
տուկ այրի մէջ տիսուր կեանք մը անցու-
նես. և միթէ նախարարներ չեկա՞ն հոս :

ՏՐԵՊ. Եկան, բայց ես դառնալու չհամոզ-
ուեցայ . . և իրենք ալ զիս յաւիտեան բա-
րեելով հեռացան :

Խոսրով. Եւ ինչպէս. ոչ ապաքէն ինձի հան-
դիպեցան և ըսին թէ ամեք թագաւորի սիր-
ութ գրաւեցինք, և կ'երթանք բերելու զին-
ւոր և արբունի պահոյընելը, որ զի՞նքը . ՀԵ-

քեղ փառօք դարձունենք . և զիս ալ քեզ
սփոփանաց միջոց մը խրկեցին մինչեւ որ վե-
րադառնան :

ՏԵՇԱՓ . Երենք քեղի անանկ զուրցելու հարկ
ունեին . . որպէս զի հոս . . դաս և ես զքեզ
պայազատելու համոզեմ :

ԽՈՍՐԱԿ . Ե՞նչ կը լսեմ . չըսի՞ր , որ թէ զզջալու
գան՝ պիտի դառնամ :

ՏԵՇԱՓ . Այս , դառնայի պիտի , բայց կարդա-
ցի սիրտերնին . . որ առջի չարիքներէն ՚ի
զատ . . տիրասպանութիւն մըն ալ հոն կը կե-
նար :

ԽՈՍՐԱԿ . Եւ ի՞նչպէս :

ՏԵՇԱՓ . Օ իս կը թիւնաւորէին :

ԽՈՍՐԱԿ . Կը թիւնաւորէին . եթէ այդպիսի
անգթութիւն մը ուզէին ընել , և միթէ չէ-
լին կրնար , քանի որ գահուդ վրայ էիր . իսկ
այսուշետեւ ինչպէս պիտի համարձակին , երբ
բաջ գիտեն , որ Խոսրովու ճանկէն ազատե-
լիք չունին :

ՏԵՇԱՓ . Ե զուրէ որդեակ իմ , ՚ի զուր . . այն՝
որ չարութեան ջերմեռանդ հետամուտ է՝
ամէն կերպ հնարքները կը մտածէ . . վեր-
ջապէս կը գտնայ հնարք մը՝ որով իւր ան-
դիմադրելի և անհամաձայն հակառակորդը
կիզերով . . մահ անոր հաշտութիւն երեխ . .
և իրեն բարեկամ :

ԽՈՍՐԱԿ . Ա՞ի բնաւ կասկածիր հայր իմ , այդ-

չափ անգութ չեն անոնք :

ՏՐԵՄԱ. Անգութ կ'ըլլան զիս քարայրի մը
մէջ գտնելնուն համար . . մինչեւ ցայսօր չէ-
ին յուսար, որ այսպիսի կեանք մը կը հաճիմ
ընտրել . . իսկ այսուհետեւ՝ անտարակոյս . .
բայց ոչ իրենց մոլութեան կրնան յաղ-
թել . . և ոչ առաքինութեան չհնազանդիլ . .
վասն որոյ իրենց ճակատները Հայաստանի
բազմերախտ տիրոջ մը արիւնով յաւիտեան
կը թխացունեն . . որպէս զի դուն պայազա-
տելով՝ զուցէ համաձայնիս իրենց . . զի ան-
փորձ ես . . . :

ԽՈՍՀՈՎ. Ծծող գանեն թագաւորազուն մը, ու
թագաւորցնեն : Ահաւասիկ ես զքեզ գրկե-
լով՝ հոգիս քու ձեռքիդ մէջ պիտի փչեմ :

ՏՐԵՄԱ. Այս, գրկէ զիս սիրասուն որդեակ,
և լսէ իմ խրատները : Զքեզ ինձ փոխան
Հայաստանի հայր կը թողում . . : Որդեամկ
իմ, թէ կուզես երջանիկ և առաքինի ըլլալ,
նոյն փնտուէ հասարակաց . . զի թէ անոնք
չունենան դուն չես կրնար . . : Թագաւոր
մը որ կը կեղեքէ զժողովուրդը իւր անյագ
փափագը լեցնելու . . իւր գահուն վրայ ե-
րերուն, և կարճատե է . . զի իւր կեանքը ժո-
զովրդեան ձեռքն է . . և ճնշուած ժողովուրդ
մը զայն կը քամէ . . : Պատժէ զանոնք՝ որք
զքեզ փայփայելով կը համոզեն թէ «Թա-
գաւոր մը պէտք է սիրէ երգոց և ուրա-

խութեան հանդէսները . . և թէ ժողովուրդ
մը թագաւորին գառն է „ և վարձատրէ . .
որոնք խստիւ ընդհակառակն կը բարողեն :
Այն բանը՝ որ մէկէն 'ի մէկ կամացդ բազ-
ցը կը թուի , մ'ըներ . . այլ անոր վերջին
դառնութիւնը միտքդ բեր : ‘Նաև խա-
ղաղասէր թագաւոր մը եղիր . . քու հայ-
րենեաց սահմանը՝ զոր ունի այսօր օտարաց
մի տար . . և իրենցն ալ առնելու մի ցան-
կար . . իսկ օտարները՝ երբ քոյդ յափշտա-
կել ուզեն , նախ ազդու և ուշիմ խրատնե-
րով առանց զբեզ պզտիկ ձգելու խաղա-
ղութիւն ընարե . . և թէ չհամոզուին , եթէ
հայր ես ժողովրդեան . . կռուէ անվեհեր ,
և պիտի վանես անտարակոյս : Որդեակ իմ .
աշխարհակալութեան ցանկացողը իրըև սէզ
է կրակի վրայ . . որ մէկէն 'ի մէկ կը պօռթ-
կայ , և շուտ մը կը մարի՝ իսկ խաղաղասէր՝
կոճղ հաստակուռ : Աշխարհակալը իւր
շնչած ատեն միայն հայրենիք արեգակ մը
կ'ընէ և ոտնակոխ փոշի մը իրենին հետ հա-
ւասար . . զի աշխարհակալին ողջութեան
ատեն ընդհանուր երկիր հուր մը կը պատ-
րաստէ , անով ինքը կը տոչորի . . և մեռնելէն
վերջը՝ կայծակինման շայրենեաց վրայ յար-
ձակելովը՝ մոխիր կը դարձունէ իսկ դուն
պսակէ հայրենիքդ կերպ կերպ ընտիր ար-
ուեստներ , երկրագործութիւն և վաճառա-

կանութիւն ծաղկեցնելով . . հոյակապ եկեղեցիներ , հանձարալից համալսարաններ և փառաւոր շինութիւններ ընելով . . զի ասոնք են զքեզ ենջանիկ , երկրի երանելի , և երկնից ընդունելի ընդղներ . . նաև իմ հաւատարիմ Ամբատիս իբրև ինձի լսէ . . և բուժօր օրէնքն ալ մ'ատեր :

Խռորով . . այր իմ , երբ դուն զիս թագաւոր մը կը համարէիր . ես քու գորովալիր գրկիդ մէջ առանձնական կենաց , և մահու վրայ կը զմայլէի :

ՏՐԴՅԱՆ . Պնակ , հեռու գնա՞ որդի հայրենաւտեաց . իմ գիրկս մի պղծեր . . անարժան ես անոր նաև կենաց՝ որ հայր մը Հայրենիքէն աւելի կը սիրէ . . ես զքեզ Հայրենեաց որդի ծնայ . . .

Խռորով . (Ոստի Աբայ) ա՞հ Հայր իմ , զիս կը մերժես . այն իրաւամբք կը մերժես . . բայց ինչպէս թագաւորեմ : Այն ապերախտ նախարարները որոնք բու քրտանց բարիքներով կշտապինա կը յագին , և բու արդար ձայնին լսել չեն խոնարհիր , իսկ ինձի կարելի՞ է որ լսեն . ինձի՝ ուստի պտուղ մը անդամ չեն քաղած :

ՏՐԴՅԱՆ . Պնակ , այն պիտի հնազանդին ակամայից բռնադատեալ , ինչպէս որ բեզի զուրցեր եմ . . թէ չունիս ուրիշ յաջորդ մը . . . բայց թէ դուն անոնց հնազանդիս , Տրդատ

Երկինքէն հուբ պիտի տեղացունէ բռւ կեան-
քըդ չարաչար կիզելու . . և ինքն ալ ան-
ձամք անագորոյն Ճիվաղմը պիտի ըլլայ հո-
գիդ իւր Ճանկերու մէջ անխնայ տուայտե-
լու: Չապա գնա , մեռիր ու ապրէ առա-
բինութեան և հայրենեաց համար . . որ երկ-
նից մէջ զիս ամենագութ հայր գտնես :

Խոսրով. Ո՞ր անգութ որդին արքունի փափ-
կութիւն կը վայելէ , և իւր հայրը անձուկ
այրի մը մէջ կը թողու :

ՏՐԴԱՊ. Խսկ իմ մեռնելէս վերջը :

Խոսրով. Կենդանի մահկանացուի մը ընտան-
եաց գութը իւր վրայ է կենդանի , խսկ մե-
ռելոյն՝ իւր ընչեց . . .

ՏՐԴԱՊ. Ակուր ուրեմն առ իմօրհնութիւնս
ալ . . զի քիչ մ' ետքը՝ այս Ճայնը ալ յաւիտ-
եան չպիտի լսես . . Տրդատայ սաստիկ ուժն
էր որ այսչափ մահուն դէմ դրաւ . . բայց
մահը սկսաւ յաղթող հանդիսանալ:

Խոսրով. Ո՞վ դառնաղետ լուր . . Ամբատ ով
Սրատ , ի՞նչ է այս .

ՄՅԲԱՊ. (ՓՂՅԵԼՈՎ) Նախարարները . . անողո-
քելի գաղան նախարարները . . զինքը թիւ-
նաւորեցին :

Խոսրով. (ԾԱՌԱԽԵԼՈՎ Ի՞ծելով) Աւաղ . . աւաղ ալ
կոտրեցաւ յուսոյս անիւր . . վազեմ ուրեմն .
վրեժխնդրութիւն , վրեժխնդրութիւն :

ՄՅԲԱՊ. (ԼՅԵՐՁ ԱՐՏԻ Ի՞ԵԼՈՎ) Այս երթանք .

վրեժինդրութիւն, վրեժինդրութիւն :
ՏԵՐԱՊ. Ո՞վ ցանկալի յոյս մը որդեակ, ուր
կը թողուս վշտալից հայր մը . և դու ան-
դութ Սմբատ : Վահագն, Ադաթանդղէ-
բռնեցէք զիրենք :

(Վահագն ու Ադաթանդելոս վասուրով իւլիոնեն) :
ԽՈՍՔՆ. Ինչո՞ւ զիս կը բռնաբարէք անողորմք,
ինչո՞ւ . իմ հօրս մահուան վրեժինդրու-
թիւն իմ պարտքս չէ մի :
ԱԳԱՅԻՆ. Դու հօր մը աղիողորմ ձայնին :
ԽՈՍՔՆ. ԱՇ, Հայր իմ. Ելի՛ր մահահոտ երկաթ-
զարկ, ու խաւարցուր արեմը, արեմը՝
որ կը մթննայ արդէն :

(Եւեն իւլիոնեն)

Վահագն. Ի՞նչ կընես. Եթէ քու կեանքդ մինակ
վերջանայ՝ ազատ ես. բայց Հայաստանը կը
վերջացունես : Ծանդ երիտասարդութիւն, կամ
ծերութիւն զգեցիր, կամ մանկութիւն :

ԽՈՍՔՆ. Հայաստանը . զեռ պիտի ապրի . ոչ
ապաքէն զարմանալի անդթութիւն մը երկ-
նից կայծակները պիտի թափէ, իւր սուրբ և
անսուրբ վայրեր առ հասարակ այրելու :
Ուրեմն լաւ չէ, որ իւր և իր կենսատու Ա-
ռիւծին մահ չտեսնելէն յառաջ մեռնիմ .
մեռէք դուք ալինծի հետ :

ԱԳԱՅԻՆ. Երող հայր մը երկնից վրեժինդ-
րութիւն պիտի արդիլէ Հայաստանէն :

Խսորակ. Երկինք կ'ամպոտի, և իւր կայծակներ
մօտ են տեղալու . մեռնի՞նք:

Վահագն. Անկարելի է, որ Աստուած այն բա-
նի մի պիղծ նախարարներու համար, իւր
բիւր ջելմեռանդ ժողովուրդ ջնջէ . ոչ ապա-
քէն կրնամ հաստատել, որ հինգարդարի հա-
մար՝ բիւր մեղապարտի կը խնայէ :

Խսորակ. Բայց մայրս, ու խոսրովիդուխտ, և
զինուորները՝ որ իրենց արցունքներով պալա-
տը կը ծփացունեն, և անհամբեր կ'սպասեն
հօր մը, ահ, անձկալի հօր մը ձեռուներուն,
իրենց արտասուբ սրբելու . իսկ ես ի՞նչ տա-
նիշ իրենց, մահը, որ իրենց մահն ալ տեսնեմ:

Ագուն. Բու կեանքդ անոնց արտասուաց
սրբիչ կրնայ ըլլալ. իսկ մահդ՝ անշուշտ մահ. . .
և այսպիսի հահ մը: Սոսկա տէր, սոսկա, դժու-
խոց ձիվաղներ պատրաստ են զբեզյափշտա-
կելու :

Խսորակ. Ա՛հ, ո՞ւ թ են. եկե՛ք դժխոց կատաղիք,
եկե՛ք յափշտակեցէ՛ք զիս:

Վահագն. Աւաղ, խելք գլխէն գացեր ըոլո-
րովին. ով Աստուած խնայէ :

Վահագն. Ուողէ՛ք զիս թողէ՛ք կամ ՚ի վրէժ-
խնդրութիւն, կամ ՚ի մահ :

ՏՐԵՄԱ. Ով Ած. ի՞նչ է յանցանքս . . որ իմ
հարազատ որդիս անդամ . . իւր ձեռուրնե-
րով իմ աչքերս դոցելու զիս անարժան կը
դատէ: Խոսրով խոսրով, լու ինձի . .

Խսորով. Ա՞չ, Հայր իմ, սիրելի Հայր իմ, ի՞նչ
կուզես խելագար որդիել մը: Ո՞վ անդութ եր-
կինք, այսպէս կը վարձատրես առ աքինի դիւ-
զազն մը. և ես այսպէս ուզեցի հայր մը
տեսնել. ուրեմն անդթութեանդ զոհ ըրէ
կեանքս, զրկէ զիս արելէ, զի կ'ատեմ.

Աժաման. Ի՞նդ պիսի խօսքերով երկինք մի խը-
ռովեր. լոէ հօրդ ձայնին, և իւր կամաց հնա-
զանդէ. որպէս զի օր մը երկինց մէջ զինքը
անբաժանելի դրկես:

Խորսով. Ձմող ձեր խօսքն ըլլայ. թողէքզիս ու-
րեմն որ վազեմ իւր երեսներէն կրկին տաք
համբոյր մը առնելու:

Պահագն. Տուր սուրդ, և անանկ. .

Խորսով. Աչաւասիկ առէք. (սուր Վահանգնին
ին-դայ, և ինչը Թագաւորին գիրիւ և վաշէ, և
Երբ ցովիլ հասնի շա-արած իւնենայ)

Խորսով. Հայր իմ, Հայր իմ, բայց լայնալանջ
կուրծքդ, ընդունե՛ սգալի որդի մը. . բայց
չէ. . ալ ձայն չի տար:

ՏՐԴԱՊ. Լիկուր. . ազնիւ որդեակ, եկուր փաթ-
թուե ինծի. . դեռ հոդիս շրթանցս վրայ կը
թափառի.

Խորսով. Աւաղ, Հայր իմ, աւաղ
(ըսելով գիրիւ ինենայ)

ՏՐԴԱՊ. Խոսրով, դուն վստահ նստիր. . որ ես
բեզ կոթնիմ. . բայց ո՞չ. . ուշ չկայ վրան . .

որդեամբ իմ որդեակ իմ, արթնցիր. ո՞չ չելսեր:
վահագն, Ագաթանգղէ, Եկեղ զինքը
յուշի բերելու...և դու ո՞վ Սմբատ, Եկուր որ
քեզ կրոթեիմ:

Երես մէի բերան. || Վկօր չարաղէտ.

(ըսելով իւրիան)

Վահագն. Օ գաստացիր Տէր պայազատ. ո՞չ
ի՞նչ եղար... ի՞նչ դիպեցաւ քեզ... աւաղ
չի լսեր... ո՞վ Աստսւած ինայէ...

Խոսրով. (Իբրև սունե արթննալով) ո՞վ է զիս
կանչող... ո՞ւր կամ ես... ո՞ւր է իմ հայրս.
(իւնապի :)

Վահագն. Ահաւասիկ ինք կուլայ. զգաստա-
ցիր իր արտասուբ սրբելու :

Խոսրով. Հայրս կուլայ. և ինչու. անպար-
տելի դիւցազն մը մանուկ դարձաւ միթէ.
Վահագն. Եւ ո՞վ չի լար իւր որդին այդպէս
ուշաթափ տեսնելով :

Խոսրով. Ձէ չէ, թող չի լայ իմ հայրս. հա
ես զգաստ եմ: Մի լար Հայր իմ միլար թող որ
լզեմ այդ արցունքները... :

Տըրապ. || Վկխոսրով, հերիք զիս վշտացունես. .
արթնցիր լաւ մը. .որ խնդակամփէմհոգիս:
Խոսրով. Փշեմ Հոգիս. այս պատրաստեմքե-
զի համար .

Տըրապ. Դիմուէ խոսրով, թէ ուրկաս :

Խոսրով. (Տիչ Տըրապին Պատին հայելով)) ո՞վ
անդութ այր :

ՏՐԴԱՊ. Փա՛ռք երկնից արթնցաւ . . հապա
խոսրով լսէ ինձ . . փոքրի ինչ :

ԽՈՎՐՈՎ. Պատրաստ եմ հայր իմ :

ՏՐԴԱՊ. Եթէ զիս երկնից մէջ չ'վշտացունել .
և հոն միւսանգամ յաւիտեան գոգուել կու-
զես . . իբրև ինձ խնամէ իմ սիրելի Հայաս-
տան . . և նախարարներուն ալ . . վրէժիւ-
դիր մ'ըլլար :

ԽՈՎՐՈՎ. Նախարարները . (ո՛վ բնութեան ան-
գութ վիժածներ) դեռ կը դթաս իրենց
հայր իմ.

ՏՐԴԱՊ. Եթէ զիս կըսիրես . . իմ կարացս հը-
նազանդէ :

ԽՈՎՐՈՎ. Ա՛յ . արդեօք ե՞րբ պիտի արժանի
ըլլամ երկնից մէջ այս քաղցր դրկին :
(ՏՐԴԱՊ աջ յեւս խովրովու գլուխն կըսյ իւրնէ
և յակատէու 'ի երկինս իւբայրացունէ)

ՏՐԴԱՊ. (Օրհնութիւն որդեակ , օրհնութի .
ցաւած հօր մը . .

ԽՈՎՐՈՎ. Ա՛յ, Հայր իմ . .

ՏՐԴԱՊ. Տէր իմե Աստուած , որչափ կ'շնչէ
իմ որդիս . . առաքինութեան , խաղաղու-
թեան , և երջանկութեան մէջ հաստատէ . .
ծաղկեցնւը զինքը բարի զաւակներով և ա-
նոնց պէս հայր ըրէ սրբոց և այրեաց . . եր-
կարատեւ կեանք մը պարգևէ . . և բու ամեն
ընտիր ձիրքերդ իւր գահուն վրայ թափէ . .
իւր թէ ներբին . . և թէ արտաքին թշնամեաց

սուրելով իրենց սիրտերը ծակէ . . այսպէս
ալ թող զձեզ օրչնէ որդեակք։
Սիրտամարտ . Աւազ, Հայրդ Հայրենեաց աւազ . .
Տրտամարտ . Տարեք իմ վերջին ողջոյնս . . իմքաղ-
ցը ամուսնիս . . սիրելի խոսրովիդուխտին,
եցանկալի զինուորներուս . . և ըսէք իրենց,
որ բնաւ չիլան ինծի համար։ Եւ թէպէտ
Տրտատայ պէս թագաւորի մը կեանք . . ան-
շուք, այրի մը մէջ քաղուիլ ամենալալի է
բայց թող յիշեն որ այս այրը իմ Հայրեն-
եացս է . . և նուիրական Գրիգորին ճգնա-
րան . . այլ թող լան անդադար Հայրենեաց
երջանկութիւն . . և խաղաղութիւն բարե-
յաղթելով. . բարեաւ . . մնա . . Հայ . . աս-
տան . . իւ մեռնի
Մէկ բերան . Աւազ, մթնցաւ Հայոց բաղդին
աստղ . (Վարդինյը իւ գոյու-ի)

